

ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻԻՆԸ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՆՆՈՒՆ Ե. ԿՕՐՈՒՆԵԱՆ

Մեծ Նոր հողի թիվ 45

1911



914
4-52

ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ

901

4-52

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻԻՒՆ





Ա. ՄԱՍ

Արտատու « ԿԱՅԻ » ԷԿ

22966



~~9988~~

A 16770



Մանուկ Ե. Գոչոցեանի

1911



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ներկայ գրքոյկս, Էջմիածնի ձեռնարանի՝ Գ. շարանի աւարտական շարադրութեանս (սիստրսապոլս) առաջին մասըն է: Գիրքս ոռուսահայոց շեզով գրած էր, սակայն Տաճկահայոց մեջ հրատարակելուս հասար, շեզուն փոխեցի:

Աշխատութեանս հրատարակ գալու գլխաւոր պատճառը այն է, որ ներկայ իրախանութեան մեջ, մեր նոր սերունդը, կամ չի հասկնար եւ կամ աղաւաղած կը հասկընայ հասարակագիտական նոր տեսութիւնները:

Այդ նոր տեսութիւնները շաւ ընթննելու հասար, անհրաժեշտ էր իմանալ անցեալ տեսութիւններն ալ, անս այդ պիտի ըստեղնելու հասար է որ մեկ հրատարակ կը դիտեմք այս:

Իսկ թէ որքան է յաջողեւ մեզ մեր ուսումնասիրութիւնը, այդ ուղիղ եւ անաչտո քննադատութեան կախած է, մեզ հասար միայն այն յայտնի է որ ձեռնարանի շարանի աւարտական շարադրութիւններու քննիչ Մարտինը գտաւ գայն « յոյժ գովելի » (ձեռնարանի անկենարար նիշն է):

Աշխատութեանս ներածական մասը երկ քիչ մը սեղծ կ'երեւի, այդ այն պատճառաւ է որ յետոյ այդ մասին երկար պիտի գրեմք «Պատմական մարերալիզմ» մեջ: Ներածութիւնը անհրաժեշտ էր գրելիլին նիսքը եւ կարիւնը բացարեւոյն հասար: Այդ մասը չհասկցողներ, կրնան ուղղակի Ա. Գրութիւն կարդալ:

Նիսքս ուսումնասիրելու ատեն օգտեւ եմ գլխաւորա-

պիսի հիշեցումներով.

1. ՎԻՊՊԷՐ .— «Հասարակական զարգացումը և պատմական խնայողությունը».

2. ՍՏԱՍՈՒԼԵՒԻՉ .— «Պատմության փոփոխությունը».

3. ԲԷՐՆՀԱՅՄ .— » »

4. ՐԻԿԷՐՏ .— » »

5. ԵԴԻԱՐԴ ՄԷՅԷՐ .— » »

6. ԲԱՐՏ .— » » որպես սովորածի.

7. ԲԵԼՏՈՎ (ՊԼԵԽԱՆՈՎ) .— Պատմության մոնիստիկական տեսակետը.

և յետոյ քանի մը փոքր գրքերով:

ԱՐԱՆ ԿՆՏՈՒՐ





Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ե Ա Ն

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

I

Ի՞նչ է պատկերները.— Օրինաչափականությունն է պատկերանությունը.— Ի՞նչ է պատկերական փիլիսոփայությունը է անոր սուտիան.— Սուխոթոժիի է պատկ. փիլիսոփայության սարքերությունը:

Ի՞նչ է պատկերները . — Մարդս որպէս կենսաբանական (պիտլոժիք) օրկանիզմ՝ անհրաժեշտ է որ պահպանէ բնութեան մէջ իր օրգանական հասարակչութիւնը: Կեանքի այդ անխուսափելի պահանջին առջև մարդը կ'ստանայ երկու վիճակ, մին կրաւորական (բասիւ), միւսը ներգործական (ազգիւ): Կրաւորական է մարդկային վիճակը, երբ նա չի կրնալով երմանալ բնութեան մշտական յարձակումներուն՝ հազիւ

հազ իր տւեալ վիճակը կը պահպանէ . բայց , շատ անգամ , այդ ալ չի կրնալով , կը տեսնենք որ նա կամաց կամաց կը կորսնցնէ իր գոյութիւնը :

Ներգործական վիճակը յարձակողական է . իւրաքանչիւր շարժում՝ օրկանիզմի մէջ կ'առաջացնէ ոյժի (էնէրժիի) պակասութիւն . սակայն առողջ օրկանիզմը աակէ ո՛չ թէ կը յաղթւի , այլ այդ պակասը կը զրդէ անո՛ր շարժւելու , յարձակելու արտաքին բնութեան վրայ և լրացնելու իր մէջ առաջացած պակասը : Օրկանիզմի այդ գործունէութիւնը կը կոչւի Գոյութեան կռիւ :

Մարդուս կենսարանական և սկզբնական շրջանին մէջ մղած գոյութեան կռիւը աննախկան և պաշտպանողական էր . թշնամիին զօրեղութիւնը սակայն պատճառ եղաւ որ , անոնք բնազգաբար իրարու մօտ համախմբւին , միասնաբար վարեն կռիւը . այդպէսով մարդկանց կռիւը կը գտնար հասարակական :

Բնութեան զէժ՝ կռիւը գործիքի միջոցաւ տեղի կ'ունենար , և այդ իսկ պատճառաւ մարդը կը տարբերւէր կենդանիներէն :

«Մարդը գործիքաւոր կենդանի է» , ըսած է Յրանգլին , թէ արտաքին բնութիւնը և թէ ներքին ցեղային գերարնակչութիւնը (բնակիչներու չափազանց շատանալը) կը ստիպէին մարդկանց փոխել իրենց կուռելու զէնքերը , այսինքն աւելի զարգացած և յարմարը ձեռք բերել կը ձգակին :

Միւս կողմէն կը բազմանար աշխատանքը և միևնոյն ցեղի մէջ առաջ կուգար աշխատանքի բաժանում , այսինքն տարբեր գործունէութեան դասեր կամ դասակարգեր , որով և առաջ կուգար ներքին դասակարգային յարաբերութիւն : Պատմութեան բովանդակութիւնը մարդոց՝ թէ իրարու եւ թէ բնութեան հետ ունեցած յարաբերութիւններու ամբողջութիւնն է :

II

Պատմութիւնը պատմական է քի օրինաչափական .— Պատմութիւնը մարդկանց յարաբերութիւնն է և անոնց գուծունէութեան արդիւնքը: Մարդիկ իրենց կեանքի կռիւք կը մղեն իրենց կամքի թելադրութեամբ(*), իրենց ազատ գործունէութեամբ, այսինքն ներքին գիտակից ձգտումներու զրդմամբ:

Իւրաքանչիւր այդպիսի մարդկանց ազատ և կամաւոր գործունէութեան գումարը կը կոչուի աշխատանքի արտադրութիւն, որը անշուշտ ունի հասարակական բնաւորութիւն:

Նախնական շրջանի մարդկանց արտադրութիւնը, և այս առթիւ առաջացած բոլոր հասարակական յարաբերութիւնները կը կրէին սահմանափակ բնաւորութիւն, այսինքն այնքան կ'արտադրէին, որքան որ պէտք էր իրենց համար: Այդ շրջանի մարդը անմիջականօրէն՝ բնութեան տարերային հանդամանքներէն էր կախած:

Բայց երբ յառաջ կուգայ սպրանքները իրարու նեափոխանակելու գրութիւնը, այսինքն, երբ սպրանքները կ'արտադրեն ո՛չ միայն իրենց սեփական պէտքերուն, այլ տարրեր սպրանքի նեափոխանակելու համար, ահա այն ատեն մարդը արտադրութեան չափ մը չ'ունի այլեւս, այսինքն նա կ'արտադրէ շատ անգամ այնքան, որքան պէժ չէ հասարակութեան համար, և առաջ կուգայ այնպիսի երեւոյթ մը, որուն երբեք չէին սպասեր, եւ իրենց ազատ կամքով չէին ցանկար:

Ոչ միայն արտադրութիւնը, այլև անկէ առաջացած ամբողջ հասարակական յարաբերութիւնները, լինին բնութեան, թէ մարդկանց զէմ կը դառնան ինքնուրոյն

(*) Կամքի թելադրողը նիւթական պահանջն է:

Եւ մարդկային կամբէն անկախ երեւոյր: Անհասնելու հուսաքական ուժի գումարը աւելի շատ, աւելի զօրեղ կը լինի, քան թէ նոյն հասարակութեան անհասնելունը առանձինն գումարւած: Այսպէսով անհատական կամքը կ'ենթարկուի հասարակաց կամքին:

Հասարակութեան յարաբերութիւնը և անոր գործունէութիւնը, ուրեմն և պատմութիւնը կը դառնայ, ըստ երեւոյթին, մարդկային անհատական կամբի արդիւնք, բայց անոր կամքէն անկախ՝ շարժւող և փոփոխող պրոցէս:

Պատմութեան անիւ գարձնողը, ո՛չ թէ անհատական կամեցողութիւնն է այլ ևս, այլ առարկայական (օպօէքդիւ) և անկախացած հասարակական յարաբերութիւնն է, որը իր կարգին պայմանաւորւած է արտագրողական միջոցներէն կամ արտագրողական ոյժէն. (գործիք, աշխարհագրական դիրք, մեքենայ, բանւորական ոյժ, ելեքարականութիւն ևլն.:

Ինչ ձև և բնաւորութիւն ունենան արտագրողական, նիւթական միջոցները, այնպէս ալ կը լինին անոր հասարակական յարաբերութիւնները, կամ պատմութեան ընթացքը:

Որովհետև հասարակական բարդ յարաբերութիւններու պատճառը մէկ է, այսինքն սխեմական միջավայրը, կամ ինչպէս սովոր են ըսել՝ արտագրողական ոյժը՝ որը մարդու քմահաճօյքէն կախւած չ'է, այլ արտաքին պայմաններէն. ուստի քննելով միայն այդ պայմաններու բնաւորութիւնը և օրէնքները, մենք կրնանք վերահասու ըլլալ նաև հասարակական զարգացման օրէնքներուն և բնոյթին, և որովհետև պատմութիւնը կը յառաջանայ շնորհիւ այդ անկախ և առարկայական օրէնքներուն ուրեմն պատմութեան ընթացքը օրինաչափական է, այսինքն որոշ օրէնքներու համաձայն

կը գործէ և որոնց կրնանք յայտնագործել :

Պատմութիւնը կը կրկնուի. — Մենք տեսանք որ պատմութիւնը ունի առարկայական (օպօէ, քզիւ), անկախ և օրինաչափական բնաւորութիւն : Նա անընդհատ շարժման և փոփոխման մէջ է, և կ'ընդգրկէ ամբողջ հասարակական մարդկութիւնը :

Հասարակական կ'ըսեմ, որովհետև անհատական գործունէութիւնը պատմութիւն չի համարուիր. ճիշտ է, շատ անգամ անհատներու անւանն ալ մեծ տեղ կը արւի բայց միայն այնպիսիներուն, որոնք հասարակական ամբողջ ձգտումը և խտէալը կը ներկայացնեն : « Նաբոլիոն Ա. -ը կ'ըսէ Բարտ, այնքան պատմութեան առարկայ կը դառնայ, որքան որ նա կը մամնացընէ բանակը : (*)

Պատմութիւնը՝ լինելով անընդհատ և օրինաչափական պրոցէս մը, կրնայ նման պարագաներու ներգործութեամբ, նման երեւոյթներ առաջացնել, այսինքն կրկնելի :

Ահա՛ թէ ինչպէս :

Մենք ըսինք որ պատմութեան բովանդակութիւնը կը կազմէ մարդուս զէպի բնութիւնը՝ և զէպի մարդիկ ունեցած յարաբերութիւնները, բայց մարդուս այդ յարաբերութիւնները պայմանաւորած են այն տնտեսական միջավայրէն, որուն մէջը կը գտնուի, ինքն իսկ վերջինս ալ իր ձևափոխումը պարտական է այն միջոցներուն, որոնցմով հասարակութիւնը կը ստիպուի իւր գոյութիւնը պահպանել. իսկ ամէն մէկ գործիք կամ արտադրական միջոց կախուած է աշխարհագրական դիրքէն :

Օր. եթէ տւեալ հասարակութիւն մը կ'ապրի Ատանա-

(*) Փրօֆ Բարս — պատմ. փիլ. որպէս սօսիոլոցի (յառաջարկ) :

չի նահանգին մէջ, ուրեմն նա աշխարհագրական դիրքի անխուսափելի թեւադրութեամբ, մեծ մասամբ կրնայ երկրագործութեամբ միայն պարապիլ. բայց որպէսզի այդպէս լինի, պէտք է որ համապատասխան գործիքներ ու արտադրողական միջոցներ ունենայ. (օր. գութան, արօր, կենդանիներ, գործաւորի ոյժ, մեքենաներ եւն.):

Երկրագործ ժողովուրդը ունի բնութեան և իրարու հետ այնպիսի յարաբերութիւն, որպիսին կը թեւադրէ իւր անտեսական գրութիւնը, օրինակ, երբէք որսորդական կամ արհեստական շրջանի յարաբերութիւն չի կրնար ունենալ:

Հասարակութեան այսպիսի յարաբերութեան համապատասխան չկը լինի նաև անոր նիստ ու կացը, վարքն ու բարքը, մի խօսքով ամբողջ գաղափարաւնութիւնը (խտէօլօփի):

Եթէ մենք նման բնական պայմաններ ունենանք ուրիշ տեղ մը, այն ժամանակ կ'ունենանք նման անտեսութիւն, նման հասարակական յարաբերութիւն և ինչպէս ըսինք, թէ և ոչ ճշտութեամբ, բայց բոլոր գծերով, այս հասարակութեան պատմութեան բնաւորութիւնը առաջինի կրկնութիւնը, նմանը կը լինի:

Եթէ a պատճառը կ'առաջացնէ b, c, d, հետևանքը, ուրեմն երբէք չի կրնար պատահել որ a ն ուրիշ անգամ առաջացնէ e, f, g, այդ հակառակ է բնագիտութեան պատճառականութեան և տրամարանական օրէնքներուն:

Կարող է պատահիլ որ նա միջախաբի մը ազդեցութեամբ ուրիշ ձև և գոյն ստանայ, իսկ արբեր միջավայրի մը մէջ՝ ուրիշ, բայց հիմունքը դարձեալ նոյնն է: Մէկ խօսքով նման պարագաներու տակ պատմութիւնը կը կրկնուի:

* * *

Եթէ պատմութիւնը մարդկանց կամքէն անկախ և

օրինաչափական է, ապա ուրեմն պատահականութիւնը
ո՛չ մէկ անգ ունի հոն, որովհետեւ իւրաքանչիւր ան-
հասի ոյժը չնչին է հասարակականի առջև, ինքն արդէն
վերջինիս մէկ մասն է, իսկ մասը կարող չէ ամբողջի
առաջացման պատճառը լինիլ, որդին կարող չ'է մօր
ծնողը լինիլ, իսկ եթէ անհատական կամքը ոչինչ է, (*)
ուրեմն պատահականութիւնն ալ անկարելի է:

III

Ի՞նչ է պատմութեան փիլիսոփայութիւնը. — Պատ-
մութիւնը կ'սկսի այն ժամանակէն երբ կը սկսի
զէպքերու գրաւոր արձանագրութիւնը: Նախնա-
կան պատմարանը, իւր սահմանափակ մտքի պատ-
ճառաւ, միայն պատմական զանազան փաստեր
կրնար արձանագրել:

Նախնական պատմարանը այնպիսի երեւոյթները կը
նկատէր, որոնք շատ ցայտուն և շօշափելի էին: Նա
չ'ուներ խորաթափանց միտք, հետախուզելու ընդունա-
կութիւն, որպէսզի պատմական երեւոյթներու ամբողջու-
թիւնը պատկերացնէր ու գտնէր անոր օրէնքները:

Բայց մարդկային կեանքը հետզհետէ կը բարդանար
և նորանոր հարցեր առաջ կը բերէր: Այդ հարցերը,
որպէս զրգիչ պատճառներ, կը բանային որոշ մարդկանց
միտքը, որոնք կամաց կամաց կ'սկսէին պատմութեան
զարգացման մէջ օրէնքներ տեսնել:

Նոքա կ'ուզէին իմանալ թէ՛ արդեօք պատմութեան
մէջ օրինաչափութիւն կա՞յ. երբ կայ, ի՞նչ է անոր պատ-
ճառը, ի՞նչ է մարդկանց պրօգրէին այս կամ այն ուղ-

(*) Անհասի դերի մասին յետոյ:

դուքիւն սուղը. աճա՛ այս հարցերու պատասխանը ,
նոյն հարցեմ ծագած՝ պատճառներէս փիլիսոփայա-
յութիւնը աւառ:

Պատմութեան փիլիսոփայութեան առարկան՝ մարդ-
կութիւնն ու անոր առաջադրած պրօպրէն է: Նա կ'աշ-
խատի գտնել այն օրէնքը , որ կայ հասարակական շարժ-
ման մէջ , և որու շնորհիւ միայն հնարաւոր է առաջադի-
մութիւնը կամ յետադիմութիւնը:

Նա կը նայի մարդկային հասարակութեան ջայտուն
երևոյթիւներուն , այս ինչ կամ այն ինչ գարու պատմու-
թեանը , և կը գտնէ այդ երևոյթիւնը յաջորդականու-
թեան պատճառը և հետեանքը և անոնց շարժիչ ազդա-
կը (Ֆագդէօրը):

Հարգաբաւոր տարի առաջ գոյութիւն ունեցող Յու-
նաստանի , Հռոմի , և սպա Գերմանական , Ռօմանօ—
Սլաւոնական աշխարհն է եղած պատմութեան փիլիսո-
փայութեան և ուսումնասիրութեան առարկան . շատ
ազգեր պատմ. փիլ. շրջանէն գուրս կը մնան:

Եթէ պատմութեան փիլիսոփայութիւնը իր նիւթը
միայն այդ ազգերէն կը վերցնէ , այդ պատճառ մը չէ
առարկելութէ , ասով անկարելի է ամիսփել և գտնել
ընդհանուր պատմութեան , իրրե մէկ ամբողջութեան ,
օրէնքները:

Այսպիսի առարկութիւն հնարաւոր էր միայն այն
պարագային երբ գանազան ազգերու մէջ տարբեր լինէր այն
դրդապատճառը՝ որու շնորհիւ կ'առաջանայ հասարա-
կութիւն , հասարակական կեանք: Ընդհակառակն ամէն
տեղ , ամէն հասարակութեան մէջ՝ համախմբուելու և
պատմութիւն առաջացնելու դրդիչ-պատճառը գոյու-
րեան կռիւն ու այդ կռի միջոցներն են:

Եթէ վերցնենք որոշ ազգեր , որոնք իրենց զարգա-
ցումով մինչև ներկայ քաղաքակրթութեանն են հասեր ,

և գանձնք անոնց զարգացման և անկման պատճառները , օրէնքները , այդպիսով մէնք իմացած կը լինենք նաև ուրիշ շատ ազգերունը :

Ոչ միայն քանի մը ազգի պատմութենէն , այլ նոյն իսկ պատմական ամբողջական դէպքէն ևս պատմութեան օրէնքները կարելի է երևան բերել , պայմանով որ , դէպքին պատճառը և հետևանքը լրիւ արտայայտուած ըլլան :

Այնպէս է նաև բնագիտութեան մէջ , օրինակ «տաքութենէ մարմինները կ'ընդլայնին» , այս օրէնքը գրանելու կամ ապացուցանելու համար բնագէտը աշխարհիս բոլոր առարկաները վերցնելու պէտք չ'ունի , բաւական է մէկ քանի փորձերու մէջ՝ օրէնքի ճշմարտութիւնը հանդէս գայ . օրեկօր այն ժամանակ հաստատուած կը լինի , երբ որ մասնաւոր փորձի ճշմարտութիւնը՝ նման ամբողջ երևոյթները կ'ընդգրկէ :

Օրինակ . Մարեմը միայն Անգլիական սնտեսական-արդիւնաբերական յարաբերութիւնները նկատի ունենալով և վերլուծութեան ենթարկելով , հանեց պատմութեան մատերիալիսական մեքոսը : Անգլիոյ սնտեսական զարգացման ճանապարհը նոյնն էր ինչ որ ամբողջ աշխարհի զարգացման ուղին է , որով և Մարքսի օրէնքն ալ ընդհանրացաւ :

IV

Սոսիոլոգիի և պատմութեան փիլիսոփայութեան սարբերութիւնը .— Հասարակական գիտութեամբ կ'ըզբաղւի նաև սոսիոլոգիան (հասարակագիտութիւնը) , բայց այս կը տարբերի պատմութեան փիլիսոփայութենէն :

Հասարակութիւնը իւր յառաջդիմութեան բնթացքին մէջ հանդէս կը բերէ զանազան համախմբումներ ,

հաստատութիւններ, ինչպէս օրինակ. պետութիւն, ազգ, բնական, բանակ, իրաւունք, ելն. ահա՛ այս կայուն (statique) դրութեան ուսումնասիրութեամբ կ'զբաղի սօսիօլօժին: Նա կը քննէ հասարակութիւնը իբրև մէկ ընդհանուր երևոյթ, իբրև մարդկային սեռ և ո՛չ թէ իբրև ցայտուն, շօշափելի դրութիւն:

Նա կը քննէ իւրաքանչիւր այդպիսի հասարակական երևոյթ, կը տարրալուծէ, կը գտնէ անոր մէջ գոյութիւն ունեցող օրեկօններու պատճառը եւ հետեւանք. օրինակ. նա կը քննէ հասարակութեան և անհատ յարաբերութիւնը, անոնց կապը, անոնց մէջ առաջացած զարգացման պատճառները և օրէնքները և կամ թէ ի՞նչ է պետութիւնը, ի՞նչպէս կ'առաջանայ, ի՞նչ օրէնքներ ունի:


Այսպէսով մենք կը տեսնենք որ սօսիօլօժի առարկան աւելի վերացական է, բայց նա իր նիւթը պատմութեան շօշափելի փաստերէն կը վերցնէ, միայն թէ ընդհանուր ձևով:

Սօսիօլօժի առարկան հանդէս կուգայ հասարակական զարգացման ընթացքին մէջ, ինչպէս օրինակ՝ պետութիւնը, ընտանիքը, բանակը, որոնք կը կառավարին իրենց մայրը եզոզ հասարակական զարգացման օրէնքներով:

Ուրեմն պատմութեան փիլիսոփայութեան և սօսիօլօժի տարրերութիւնը այն է որ առաջինի նիւթն է՝ մարդկութեան սկզբնական շրջանէն սկսած մինչեւ հիմակւայ զարգացումը, իբրև շօշափելի ամբողջութիւն մը, իսկ սօսիօլօժիներ վերացական հասարակութիւնը ու անոր հաստատութիւններն՝ իբրև սեռ:

Պատմութեան փիլիսոփայութիւնը կ'ուսումնասիրէ հասարակութիւնը, անոր շարժման (դինամիք) ժամանակը, անոր ամբողջական ընթացքի մէջ, իսկ սօսիօ-

լօժին՝ կայուն ժամանակը, անոր զանազան մնայուն
հաստատութիւնները: (*)



(*) Փրօժ. Բարսր իր պատմ. փիլ. գրքի մէջ այս երկունն ալ
միացուցած է, որ՝ սխալ է:

Ա . Գ . Լ . Ո . Ի . Ե

ՇՐՋԱԳԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԷՅՈՐԻՆ

I

Ի՞նչ է աշխարհայեացքը .— Նա դաստիարակչի է .—

Յուսակա՛ն շրջան, Արխսո՛սեղ .— Քաղաքա-
կրթութեան երեխայի մասինները :

Մենք ըսինք որ մարդկանց՝ թէ բնութեան և թէ իրարու նեւ ունեցած յարաբերութիւնը՝ հասարակական է . իսկ պատմութիւնն ալ հասարակական ղէպերու համադրման է , այդ ղէպերը սխառեմի կը վերածէ և կը դասուորէ :

Կան պատմարաններ որ բոլորովին հակառակ տեսակէտ կ'ընդունին :

Ինչպէս ամէն գիտութիւն , այնպէս ալ պատմութիւնը ուսումնասիրելու համար , երբոր հանդէս կուգան զանազան գաղափարաբաններ , անոնք նախ կ'ունենան նիւթին մտանալու որոշ աշխարհայեացք :

Ամէն մարդ չի կրնար պատմարան կամ պատմափիլիսոփայ լինիլ , այլ այնպիսին՝ որու վրայ զօրեղ կերպով ազդեր է իւր ժամանակի հասարակական անցուդարձը , որու հոգեբանութեան մէջ անցեալի վերաբերմամբ որոշ հետաքրքրութիւն արմատացեր է . նա այդ հետաքրքրութեան և ներքին զրդման ազդեցութեան տակ կը գիտէ ղէպի նոյն անցեալը , զայն ուսումնասիրելու և իւր մէջ արտացոլած հասարակական տեսակէտը հիմնաւորող փաստեր բերելու :

Աւխարհայեացիք իրական կեանքի մասին եղած ընդհանրացում մըն է. անոր մէջ արբող յարաբերութիւններու, օրէնքներու միաւորումն և ընդգրկած ամբողջութիւնն է :

Բայց որովհետև իրական կեանքի յարաբերութիւնները նման չեն, անոր մէջ արբող շահերը, ձգտումները, գործողութիւններն ալ զանազան են՝ տարբեր դասակարգելու գոյութեան պատճառաւ, ուստի և այդ բոլորի վրայ հիմնուած տեսակէտն ալ դասակարգային և զանազան է :

Ամէն տեսակէտ անհատին հոգիին բովէն կ'անցնի և անոր կնիքը կը կրէ. իսկ անհատին ներքին հոգին՝ ոչ թէ բնածին երեւոյթ մ'է, այլ՝ իւր գոյութեամբ, պարտական է իւր չրջապատին, կամ այն հասարակական-դասակարգային հոգեբանութեան՝ որու մէջ կ'ապրի և կամ որը իւր վրայ զօրեղապէս ներգործեր է : Ուրեմն ամէն աշխարհայեացք հասարակական հոգեբանութեան կնիքը կը կրէ :

Անա այդ պատճառով է որ շատ պատմաբաններ՝ նայած թէ ո՛ր դասակարգի գաղափարաբաններն են, անոր համաձայն ալ կը նային պատմութեան վրայ : Անոնք պատմութիւնը կամ գիտութիւն կ'անւանեն, կամ հակառակը, օրինաչափական՝ կամ պատահական :

Բացի այդ, նշանակութիւն ունի նաև ո՞ր դարումէջ ապրիլը հասարակական ու բնագիտական զարգացման ի՞նչ աստիճանի վրայ գտնուիլը :

Որքան հասարակական յարաբերութիւնները, ազգային շփումները սահմանափակ լինին, այնքան պատմութեան մասին եղած գիտակցութիւնը նեղ և չընչին կը լինի. որքան այդ յարաբերութիւնները և շփումները զարգանան, ընդհանրանան, այնքան մարդիկ իրարու կը ճանաչեն և գաղափարաբանները կրնան նկատի աւնենալ

թէ անցեալի եւ թէ ներկայի գործողութեանց շղթան , այնքան պատմութեան մասին եղած տեսութիւնները կ'ընդհանրանան եւ օրէնքի կը վերածւին :

Թէ ո՞րքան ճիշդ է այս , իսկոյն աչքի կ'իջնայ , երբ որ անցնինք պատմութեան փիլիսոփայական տեսութիւններու քննութեանը :

II

Պատմութեան փիլիսոփայութիւնը՝ ինչպէս ըսի , մարդկանց անջատ մտքի , կամ ներքին սակզծագործութեան արդիւնքը չէ , այլ սրոշ պատմական զարգացման , հասարակական յարաբերութեան հասունացման արդիւնքը :

Յունական հասարակական կեանքը եւ շփուժը անհամեմատ բարձր գրութեան էր հասեր : Բարդ համայնական կեանքը նորանոր հարցեր էր առաջագրեր եւ ժամանակի գաղափարաբանները տւեր էին իրենց մեկնաբանութիւնը՝ ամէն ճիւղի վերաբերմամբ : IV դարու մէջ (ն . ք . ք .) այդպիսի մեծ մարդոցմէն էր Արիստոսը :

Սա իւրաքանչիւր ազգի պատմութեան զարգացման մէջ կ'ուզէ օրեցօր գտնել : Իւրաքանչիւր ազգիւր զարգացման օրէն սկսած երեք աստիճաններէ կ'անցնի , որը նորէն կը կրկնւի , եւ այսպէս անընդհատ . այս է շրջագարծութեան թէորին : Ա . աստիճանը ընտանիքն է . մարդիկ առաջին անգամ ընտանիքի ձևով կեանքի կ'սկսին . ընտանիքի մէջ կը սաղմնաւորը ազագայ աւելի լայն հասարակութեան պլանը . բ . քաղաքական կեանքն է . յայտնի է որ Յունաստանի մէջ ընտանիքէն յետոյ համայնական կեանք ունէր նաև քաղաքը , ամբողջ քաղաքը ճիշդ մէկ ընտանիքի նման միութիւն մ'էր : Գ . պետութիւնն է , որը կ'ըզգրկէ թէ

ընտանիքը և թէ քաղաքի բնակչութիւնը, և որու մէջ հասարակութիւնը կը հասնի իր գրութեան գիտակցութեանը, այսինքն պետութիւնը արդէն այն աստիճանն է, ուր մարդիկ կ'ուզեն իրենց գիտակցած կարգերով կառավարուիլ :

II

XIII—XV դարու զարգացումը .— Մաֆիավիչի, զարգացնակ ազգակր՝ առաջինուրիւնը .—
Կանկակիյան — Ֆերրարիս .—

Պատմական զարգացման իմացութիւնը՝ հասարակական յառաջգիմութեան արդիւնքն է . այդ կ'երևի անկէ, որ Յունաստանի անկումէն յետոյ, երկար ժամանակ, լինդհանուր կեանքը ընդգրկուչ պատմական անսութիւն առաջ չէ եկեր :

XIII դարէն սկսած աւատական անկենդան և մեռելային դրութեանը կը յաջորդէ արդիւնարեքութեան զովաշունչ կեանքը : Հասարակական մտքի ասպարեզէն կը հեռանան խեղդող, ճնշիչ սքոյլասպիքի մատրամները և անոնց կը յաջորդէ կենդանի, սատասուն միաքը, որը իւր թափանձիկ հայեացքով կը սլանայ դէպի անցեալը, կը պրպտէ հին հին աւերակները և դուրս կը հանէ այնտեղէն միլիոնաւոր մարդոց կենդանի կեանքով առաջացած օրէնքները, հեքեաթները, առասպելները, մէկ խոսքով՝ պատմութիւնը : Այդ վերածնութեան (renaissance), XV դարն է :

Վերածնութեան դարը՝ երկար հիւանդութիւնէ արթնցող և ուժերը կազդուրող երիտասարդի մը նման, մտաւոր կեանքի պարտեզէն արտաբերութեան կը հաւաքէր : XV դարը, առաջինը և երկրորդը

մեծագիտական գրքերի
Библиотечка
Հայաստանի Գրական Գործերի Կոմիտէի

չվման շնորհիւ կենսունակ դարձած այդ դարը, բնդունակ էր տալու իր պատմափիլիսոփաները, որովհետեւ, այս շրջանի մասուոր մակարդակը համեմատաբար աւելի բարձր վիճակի հասեր էր:

Պէտք էր զտել աւանդութիւնները, հեքեաթները, սուսպելները, հաս ու կտոր հասած պատմագրութիւնները և ասոնցմէ եզրակացնել մաքրկային կեանքի զարգացման օրէնքը:

XV դարու հասարակական մաքի արժնացման զրդիչ պատճառը՝ նոր բարգաւաճող առևտրական յարաբերութիւնն ու անոր վրայ առաջացող բուռժուա գասակարգն էր: Սակայն բուռժուալին գեռ ամբողջովին զրութեան տէրը չէր, կղերաֆէոզալ գասն ևս ունէր իւր որոշ գերը. ահա այդ պատճառաւ մենք կը պատահինք այնպիսի գաղտնարարաններու, որոնք կը կրեն երկու գասակարգի ալ կնիքը, որով ևւ երկերեսանի հոգերանութեան տէր կը լինին. ասոնցմէ է Մախալէ:

XV դարու Մաքիավէլական պատմափիլիսոփայական աշխարհայեացքը դարձեալ Արիստոտելի շրջագարձութեան տեսութիւնն է (այսինքն որոշ աստիճան բարձրանողէն վերջը կրկին առաջւան զրութեանը գաւնալ և նոյն աստիճաններով բարձրանալ): Ինչպէս Արիստոտելը միայն Յունաց պատմութիւնը, Մաքիավէլն ալ միայն Հռովմիւնը նկատի ունէր:

Պատմութեան զարգացման ազդակը՝ առաքինութիւնը կը համարէր: Առաքինութեան զարգացումը երկու շրջանի կը բաժնէր. ա) առաքինութեան ծագիկը. բ) փճանալը: Այդ հիման վրայ հասարակութիւնը երկու գասակարգի կը բաժնուի՝ միջնագարեան արիստոկրատեան կաւ՝ նորագոյն միապետական և թեմակրատական: Այդ երկուսի մէջ միշտ կոխ տեղի կ'ունենար, իսկ թէ ասոնցմէ ո՞րն էր առաքինին, և ո՞րը ոչ, մաքիավէլ

պարզ չէր արտայայտեր, այլ երկեւեասնի քաղաքականութեան կը հեռուէր: Մէկ կողմէն՝ ժողովուրդին խորհուրդ կուտար բնականութեան արտօնութիւններու գէժ կուելու, միւս կողմէն վերջինիս միջոցներ կուտար գէժմտկրասիրին սանձելու համար: Այսպէս է Մաքիավելլական քաղաքականութիւնը, որը գրականութեան մէջ շատ գործածական է:

Այն ժամանակուայ, Իտալիան նոր արդիւնաբերութեան այդ երկիրը, Մաքիավելլի աչքէն ինկած էր, հոն առաքինութիւնը ոչնչացեր էր, սակայն մարդ իր անձնական շահու ևսէն ինկած էր:

Ըստ Մաքիավելլի, այս ինկած շրջանի նախորդը՝ բարձր առաքինութեան շրջանն էր, այդ ալ միջին դարու Իտալիոյ հանրապետութիւնը, Հին Յունաստանը, Հին Հռովմն էր: Այնտեղ՝ օրէնքը, բարոյականութիւնը, կրօնական նախապաշարումները՝ հասարակութիւնը կը սանձէին, որով միապետութիւնը աւելորդ կը դառնար:

Այսպէս՝ ամբողջ աշխարհը Մաքիավելլի միեւնոյն օրէնքի մեծական կրկնութիւնը կը պատկերանար: Յունաստանի, Հռովմի և Իտալիոյ մէջ առաքինութիւնը հասաւ իր բարձրութեանը և յետոյ ինկաւ:

Առաքինութեան ինկած ատենը բնապետութիւնը կը ախրէ, որու ճնշումէն նոր առաքինութիւն յառաջ կուգայ:

Մաքիավելլին թէ քաղաքական և թէ կրօնական այս շրջադարձութիւնը՝ երկնային մարմիններու հետ կը կապէ: Մարդկային հասարակութեան յառաջդիմութեան շրջանառութեան օրէնքը՝ երկնային մարմիններու մէջ գոյութիւն ունեցող օրէնքներն են: Այսպէսով Մաքիավելլ կ'իշխայ խորհրդապաշտութեան (մետաֆիզիկ) մէջ:

Ուրիշ կերպ չէր ալ կրնար ըլլալ՝ նախ՝ որովհետև միայն Հռովմի պատմութիւնը նկատի ունէր, երկրորդ՝

մշակույթը այն աստիճանի չէր զարգացեր, որ կարողա-
նար երկնային մարմիններու, ուրեմն և աստեղագիտա-
կան և հասարակագիտական օրէնքները իրարմէ՛ զանա-
զանել :

Կանազանեղան, Մաքրաթէլլին հետեւելով նոյն շրջա-
դարձութեան տեսութեան մէջ, կը պնդէր թէ՛ պետու-
թիւն և կրօնքը կը պայմանաւորեն հասարակութիւնը և
երկնային մարմիններու նման որոշ շրջան կ'ընեն զէպի
միապետութիւն, յետոյ զէպի Արիստակրասի և ապա
զէպի Օլիկարչի և ապա կրկին զէպի միապետութիւն
և այլն :

Ֆերբարիս այս տեսութիւնը մաթեմատիկական ճշ-
տութեամբ հաշուեց, որոշեց համաստեղութեանց շրջան-
ները, և զանոնք որոշ դարերու բաժնեց. այս շրջան-
ներէն իւրաքանչիւրը կ'առաջացնէ որոշ հասարակական
զաղափար (խէւպ) որը յետոյ զէպի անկումի կը դիմէ,
որմէ յետոյ կրկին կը վերադառնայ և այսպէս անընդ-
հատ :

Այս տեսութիւններուն մէջ մենք արդէն օրէնք գըս-
նելու ձգտումներ կը նկատենք. բայց բոլոր շրջանները
զօրեղ երևակայութեան և կամայականութեան արդիւն-
քն են :

Այս տեսութիւնը իր լրիւ և զարգացած ձևակեր-
պումն ստացաւ Փանբարիս Վիկկոյի մօտ. 1664-1744
թւին :



III

Վիկկրն—զարգացնակ սարակը՝ հոգիի յստրաքիւնը.—
Իրաւունք և շեղու.— Պատմութեան փիլիսո-
փայութեան հայրը.—

XVII դարուն՝ հասարակական յարաբերութիւնները
ըստ բաւականի զարգացեր էին. հասարակ առևտրական
դասակարգերը մէջտեղ գալով իրենց գոյութիւնը զգալի
էին զարցուցեր: Մինչև այդ առջ՝ գաղափարաբանները
կ'անգիտանային մարդու մասին, և կ'ըզբազէին միայն
բարձր երկնքով և անմատչելի հոգւով. այժմ՝ իրական
կեանքը անոնց ուշադրութիւնը իր վրայ զարցնել կ'ըս-
տիպէր:

Վիկկրն՝ անսնելով մարդկութեան գործնէութիւնը,
և մարդկանց կեանքով յառաջացած քաղաքակրթական
հաստատութիւնները, այլ ևս մարդկային հասարակու-
թեան զարգացումը ոչ թէ երկնային մարմիններէն կախ-
ւած կը համարէր, ոչ թէ միայն միսթիկ բացատրու-
թեամբ կը բաւականանար, այլ՝ հասարակութեան զար-
գացումը մարդու ձեռքով իսկ կը լինի կ'ըսէր. « Աստ-
ւած աշխարհի հանձարն է, մարդկային հանձարը՝ մար-
դու մէջ Աստւած է », կ'ըսէր Վիկկրն:

Ամբողջ հասարակական գործունէութիւնը մարդու
հոգիի բնութեան պայմանաւորւած է: Անոր զրդիչ
պատճառը հոգիի երկու յաստութիւններն են՝ լեզու և
իրաւունք: Աստիք են քաղաքակրթութեան, իմաստիքէն
գիտութիւններու հիմունքը: Բայց մարդկային հոգին բա-
ւական է բարձրագոյն ոյժէն—Ասուծմէն: Աստւածա-
ձայնին հովանաւորութիւնը մարդկային գործերու վը-
րայ է:

Մարդկային պատմութիւնը ունի որոշ փուլեր, նա

կանոնաւոր կերպով կ'անցնէ այդ շրջանները . Վիկկոն
այդ շրջանները վերցուցեր է Յունաց պատմութիւնէն :
Այսպէս կը լինի ամէն ազգի պատմութիւնը , նախ ման-
կութիւն , Բ . հասունցած վիճակ , Գ . մահ :

Առաջին շրջանը աստ.ածներու դարն է . այն աս-
տեն կըր Յունաստանը աստ.ածները կը կռաւարէին ,
մարդիկ անոնց օրէնքէն դուրս չէին գար . ամէն բան
անոնցմով պայմանաւորւած էր : Յետոյ կուգայ Յունա-
կան « Հերոսներու դարը » . այս այն ժամանակն էր ,
կըր մարդ-գազանները իրարու հետ կը կուէին և յաղ-
թողները « հերոս » կը կոչուէին : Յետոյ՝ երբոր սամիկը
տիրապետողները կը յաղթէ և ակը կը լինի , այդ՝
« մարդկութեան դարն է » :

Առաջին-աստ.ածներու շրջանէն առաջ մարդիկ ու-
ջինչով չէին զանազաններ վայրենիներէն . անոնք չէին
խօսեր . չունէին կրօն և օրէնք , քաղկու փոխարէն կը
մազլցէին :

Ամպրոպը—ամպի գոռոշը սարսափեցուց մարդուն .
նա քաշուեցաւ անկիւն մը , խրճիթ մը շինեց , յետոյ բզ-
գաց երկնքի զօրութիւնը՝ աստ.ածներու գոյութիւնը :

Ուրեմն մարդկային հոգիին երկնք՝ սարսափէն զըր-
դըւած՝ ինքնագիտակցութեան եկաւ , և հետզհետէ զար-
գանալով՝ ուղեց իմանալ անձանօթ ոյժը . յառաջա-
ցուց նորանոր աստ.ածներ . յառաջ եկաւ կախարդու-
թիւնը : որը անձանօթը հասկնալու միջոց մըն էր : Այս
շրջանէն սկսած հանդէս եկան հերոսակալն և մարդկա-
յին դարերը : Բայց ինչ ճանապարհով որ մարդկային
քաղաքակրթութիւնը եկեր էր , դարձեալ նոյն սեղը կը
զաննար , որպէս զի նորէն աստիճանաբար՝ նոյն ճանա-
պարհով առաջ գալը սկսէր :

Այսպիսով միջին դարու մարդկութիւնը վերադար-
ձաւ իր սկզբնական-բարբարոսական շրջանին : Զար-

գաշմանն ազդակը աշտացաւ, լեզունն անհասկնալի դարձաւ: Այս այն շրջանն էր ուր կաթողիկոսականութիւնը կը տիրապետէր:

Ահա այսպէս կը նկարագրէր Վիկկոն պատմափիլիսոփայութիւնը: Ինչպէս կը տեսնէք, Վիկկոն չունի անընդհատ յառաջդիմութեան գաղափարը. բաւ անոր, քաղաքակրթութիւնը կը յառաջանայ և որոշ աստիճանի հասնելէն վերջը կ'ոչնչանայ:

Վիկկոն պատմութեան փիլիսոփայութեան հայրը կը կոչւի այն տեսակէտով որ նա առաջին անգամ փորձեր է մարդկային պատմութեան զարգացման օրէնքները ցոյց տալ. նա է որ ցոյց տուաւ այն անվերջ կրկնութիւնը՝ որու համաձայն ժողովուրդ մը իր նախորդներուն ճանապարհէն կերթայ, և իր տեղը ապագայ եկողին կը թողու:

Իսկ այդ ընթացքէն առաջ եկած հերոսները ոչ թէ հեղինակաւորներ են, այլ քաղաքակրթութեան արդիւնք:

Իւրաքանչիւր բարձր մշակոյթ ապագային ինքնուախնդրեան պիտի ոչնչանայ, որմէ յետոյ անոր տեղը ուրիշը պիտի զարգանայ: Չկայ կանգուն դրութիւն, ամէն ինչ կը շարժի. Le roi est mort, vive le roi. Այս էր Վիկկոն, այդ մեծ մարդու տեսութիւնը:

IV

Եկեղեցական ժիրապետութիւն. — Օգոստինոս ու Խիլիսաները (1640). — Պատմութեան զարգացման ազդակը՝ տեսարանի առաջինութիւնը:

Ամբողջ միջին դարը եկեղեցական տիրապետութեան ընդարձակ շրջան մը կը կազմէ: Այդ ատենի գաղափարախօսները միայն եկեղեցական հայրերն էին,

որոնք ունէին չարք մը դպրոցներ: Գասաւանդութաւ-
թիւնը ընդհանրապէս զերբնական, կրօնական սքոլաս-
դիք նիւթերու մասին էր:

Եկեղեցական հայրերու մէջ ալ կան հեղինակներ,
որոնք մարդկային պատմութեան զարգացման մասին ի-
րենց կարծիքը յայտնած են: Բայց կաթողիկէ եկեղեցին,
իրրև աւատական հակայ տիրապետութիւն մը, համաշ-
խարհային նշանակութիւն ունէր, և անոր զազափարա-
խօսներն ալ մարդկային միակ նպատակը եկեղեցին կը
համարէին:

Ամբողջ մարդկութիւնը, ըստ անոնց, միութիւն մը,
հօտ մը պիտի կազմէ և եկեղեցին անոր միակ հովիւր
պիտի լինի: Մարդկային պատմութիւն ըսելով, եկեղե-
ցիի պատմութիւնը կը հասկնային:

Ասոնց ներկայացուցիչը Յոզուսիանոսն ու Խիլիասներն
էին (1640): Ըստ Յոզուսիանոսի, հասարակական կեան-
քի մէջ եղած կոխը՝ Աստուծոյ և Սատանայի կոխն է-
վաղ թէ ուշ սատանան պիտի յաղթէի, և Աստուծոյ երկ-
րին մէջ, մարդկային կեանքը հանգստութիւն պիտի
վայելէ: Աստուած իր կոխը կը մզէ եկեղեցիի միջոցաւ,
ուրեմն եկեղեցին յաղթող և ընդհանուրին տիրապետող
պիտի դառնայ:

Ըստ Խիլիասներու՝ պատմութեան կեանքը 1000
տարի միայն պիտի տևէ. աշխարհի վերջանալու մօտե-
րը՝ քրիստոնէութիւնը ամբողջ աշխարհին պիտի տիրէ,
և աւեսարանի աւախիւնուրիւնը պիտի տարածւի ամէն
տեղ, -de mari ad mare- ծովէն մինչ ծով:

Այդ հիման վրայ, Խիլիասներ պատմութիւնը երեք
շրջանի կը բաժնէին.— Ա. Հին Կաակարանի շրջան,
երբ Սարսափը կը թագաւորէր, և որուն՝ Հօր թագա-
ւորութիւն կ'ըսէին: Բ. Նոր Կաակարան, այսինքն Որ-
դիի թագաւորութիւն: Գ. Յաւիտենական աւետարան,

ուր սէրն ու բանականութիւնը պիտի թագաւորեն: Այս շրջանին պիտի կործանուի նոր բարեւոյնը (այսինքն Աւինիօնը^(*)), ուր պապերը կը նստէին: (Աստուք խիստ հակառակ էին ժամանակի պապերու անբարոյական ընթացքին):

Այս տեսութեան մէջ յայտնի է նաև Պարսեղեւոր:

Այստեղ, թէև մենք շրջադարձութեան տեսութեան հակառակ, աստիճանական զարգացման թէորին կը տեսնենք, բայց այդ տեսութիւնը ասոնց մօտ չը զարգացաւ, այլ յետոյ: Հոս աստիճանական զարգացումը զուտ երևակայական է (Ֆանասատիք) և ոչ թէ իրական կեանքի վերլուծութեան արդիւնք:

V

Բուրժուազական դասակարգի զօրացումը.— Անգլիոյ ազդեցութիւնը.— Մօսկուսիի.— «Օրենքներուն հոգին» (1753).— Պասնուքեան ազդակը՝ աշխարհագրական դիրքը.— Օրենքի նըշանակութիւնը:

XVII էն՝ սկսած մինչև XVIII դարը, անտեսական յարարերութիւնները բաւական յառաջդիմած էին: Հարգապահութեան միջոցները թէ դիւրացեր և թէ բազմացեր էին: Ամերիկայի և Հնդկաստանի գիւտը՝ հասարակական շփման մեծ զարկ տւած էր: Մեքենական գիտութիւնը օրը օրին նւաճումներ կ'ընէր: Ահա այս պարզաներու տակ մարդկութեան զարգացման մասին ալ նորանոր տեսութիւններ հանդէս պիտի գային: Զարգացման տեսութիւնը դեռ այն աստիճանի չէր հասեր

(*) Աւինիօնի Ֆրանսայի հարաւային ֆուլմենէն մին է:

որ յաւիտենական զարգացման թէոսին հանդէս դար . XVIII դարու կէսին դեռ ևս նախկին շրջագարձութեան թէոսին էր :

Ճարտարարւեստի յառաջգիմութիւնը , նորանոր դասակարգեր յառաջ բերած էր : Աստնցմէ առաջագոյնը բուռժուս դասակարգն էր . ասոր համար նորածագ կեանքը վարգագոյն էր , գիւղ ու քաղաք , բերք ու բարութիւն , անոր հարստութեան մշտական ազդիւններն էին . գիտութիւնը անոր սարուկն էր , զոր կը ծառայէցնէր իր ուղած ասե՛նը :

Ընդհակառակն աւատապետ և քայքայուող մանրարդիւնարերոզի արևը սև էր . նա օրէ օր կը նւաղէր , անտեսապէս կը ծխւէր : Ասոնք իրենց միակ թշնամին փաղափր կը նկատէին : Սա էր իրենց անտեսութիւն ծրծողը , այնանդի բուրժուագին էր իրենց դահիճը : Բայց կատարելապէս քայքայուելէն վերջը , սախաւած էին նոյն այդ ատելի քաղաքը գիմելու , գործ գանկու յոյսով :

Ֆէոզալը կ'ատէր ամբողջ ներկան , գիտութիւնը , զեղարւեստը , մէկ խօսքով այն ամէնը՝ ինչ որ նոր էր : Նա կը քարոզէր . « Յե՛տ , դէպի փառաւոր անցեալը , դէպի այնտեղ՝ ուր առաքինութիւն , մեծին յարգանք , տիրոջը հնազանդութիւն կայ » :

Այս տեղէն կ'ըսկսի Ռոմանտիքական գրականութիւնը . այս՝ Հնդկիներու և վայրենիներու կեանքի ուսումնասիրութեան շրջանն էր : Ֆէոզալի ներկայացուցիչները և ճիգելիճներու միսիոնարները , այս առթիւ ահագին երկարասիրութիւններ կը հրատարակէին : Մարդկային անցեալը կամաց կամաց պարզելի կը սկսի . յառաջգիմութեան ընթացքը մարդոց աչքին առջև կը գրւի : Մեծ ճանապարհորդութիւններ կը սկսին նաև դէպի անգլիա , որու մասին մինչև այդ ատեն կանոնաւոր տեղեկութիւն չունէին : Կը նկարագրէին Անգլիոյ

կեանքը, քաղաքակրթութիւնը: Ով որ Անգլիա չէր երթար, նա ազէս կը համարուէր: Հալածւած գաղթականները (emigrants), ֆրանսական ազատամիտները, հոն առանձին շրջաններ ունէին, թէ անգլիական կեանքը կ'ուսումնասիրէին և թէ այդ տեղի լուսաւորութիւնը Ծրանսա կը տարածէին:

Սկսած ուսմանտիքական գրեւծներէն մինչև փիլիսոփայականը, Ռօբինզոն Գրուզոյէն մինչև Լոկկ, Բիկոն, Թոմմաս Մօօր, ֆրանսերէնի կը թարգմանուէին:

Կեանքի մէջ ասոնցմէ էր նաև Մոնթէսքիէօ. ուրեմն Վիկկոն մինչև Մոնթէսքիէօ բաւական զարգացում եղած էր: Մարդկային կեանքի ուսումնասիրութիւնը աւելի լայնացեր էր և պատմութեան գիտութեան համար աւելի ընդարցակ ստարգել բացւած էր: Այսու ամենայնիւ ոչ այնքան՝ որով կարելի էլլար ամբողջ մարդկային կեանքը ընդգրկել և անոնց մշտական զարգացման (progrès) օրէնքը գտնել: Մոնթէսքիէօ այդ չափով միայն օգտւած էր:

Սա եղաւ պատմութեան փիլիսոփայութեան լուրջ զարկ տւողը իր մէկ գրուածքով՝ որ հետեւեալ վերնագիրը ունի « de l'esprit des lois » (Օրէնքներու ոգին 1753): Սա ալ Վիկկոն նման կ'ընդունի Երզնայի արքեպիսկոպոսի գաղափարը: Պատմութիւնը կը կրկնուի. նորը միշտ բարձր է հինէն, քրիստոնէութիւնը՝ հեթանոսութենէն:

Ինչպէս տեսանք, Վիկկոն իր օրէնքները Հառմի քաղաքակրթութենէն հանած էր, իսկ Մոնթէսքիէօ՝ Անգլիոյ սահմանադրութենէն. նա կ'ուզէր այդ օրէնքները Ծրանսա մտցնել: Նա ոչ թէ ֆէոդալական-յետագիմական՝ այլ յառաջագէմ դատակարգի գաղափարաբանն էր:

Իւր «օրէնքներու ոգին» գրքի մէջ յայտնած է որ,

պատահականութիւնը , մասնաւոր դէպքերը կամ քրտնահոսքը չեն որ պատմական երևոյթներ կը յառաջացրնեն , այլ որոշ օրէնքները սկզբունքները և նա իր գրքով եկած էր այդ օրէնքները գանկու :

Մօնթէսքիէօ մարդկային զարգացման ազդակը , բնութեամբ է աշխարհագրական դիրքը ու կլիման , այսու հանդերձ պետութեան կողմէն ճանչցւած խելացի և օգտակար օրէնքներու ևս մեծ աեղ կուտար :

Ըստ Մօնթէսքիէօի աշխարհագրական դիրքը կ'ազդէ հասարակութեան բնութեան , քաղաքական կազմին և բարոյականութեան վրայ : Յուրաք , սաքը , արևելքը , արևմուտքը , Նիւսիան ու հարաւը կ'որոշեն ազգերու բնոյթը : Զանազան կլիմայի համաձայն մարդիկ արագաշարժ կամ գանդազարարժ գործունեայ կամ ծոյլ կը լինին :

Նիւսիսի բնակիչները շատ առկուն են և քիչ ըզգայուն . «Ռուսի մարմբ մինչև որ չը ճեղքես , ջու չի զգար» : Արևելքցին օրկանիզմի թուլութիւն ունի և չստիպանց զգայուն է . առաջին տգտորութիւնը անոր վրայ շատ զօրեղ կ'ազդէ . ասոր հետ մեկտեղ նա դանդաղաշարժ և ծոյլ է . իր թէ սովորութիւնները և թէ սարազը ուշ կը փոխէ :

Մօնթէսքիէօ՝ անդլիացիներու թէ քաղաքակրթութիւնը և թէ մարդաստանութիւնը անոնց մարմնի կազմութեան և արեան անմաքրութեան կը վերագրէր : Աշխարհագրական դիրքը , ըստ Մօնթէսքիէօի , մարդոց որոշ բնութեան կուտայ , որմէ կը պայմանաւորին անոնց բարոյականութիւնը , կրօնը , քաղաքակրթութիւնը , գրականութիւնը և այլն :

Ապարապի հողի բարերեւութեան պատճառաւ՝ հասարակութեան մէկ մասը շատ կ'օգտուէր , իսկ միւս մասը սարուկ կը մնար :

Ընդհակառակն Ազգիկէի հողին ազքասութիւնը բուրբին աշխատիլ կ'ըստիպէր, այդ պատճառաւ բոլորն ալ հաւատար էին. պետական կազմը ռամկավարական էր:

Բնական և աշխարհագրական պայմանները լաւ ուսումնասիրողը շատ օգտակար օրէնքներ կրնայ հանել, որոնցմով պետութիւնը մեծ քաղաքական գործեր կրնայ կատարել:

Բնութիւնը և օրէնքները իրարու կը լրացնեն, բայց կարելի չէ ըսել թէ՛ սուրիէ կ'սկսի մէկը, ուր կը վերջանայ միւսը: Բնութիւնը՝ հասարակական կազմը որոշ գրութեամբ պահողն է, իսկ օրէնքը՝ շարժող ու կառավարողը:

Մօնթէսքիէօ ժողովուրդները և պետութիւնը որոշ զասաւորութեան կ'ենթարկէ, ասոնցմէ բռնապետականին շարժիչ-պատճառը վախն է, միապետականին՝ յարգանքը, ևասարակապետականին՝ առաքինութիւնը: Անա հասարակական այսպիսի հիմքերու համաձայն կը լինին նաև անոր զանազան գաղափարաբանութիւնները:

VI

Ճեւնասական Լուսաւորիչները

Կեանքի զարգացումը. — Վոլդիո, Դիոյո, Հոլթախ. —

Պասնոքեան «իիլիսոփայօրեն» ևայիլ. — Պասնոքեան

պղպղը՝ դասխարակութիւնը. — Կար-

ծիքի դերը. — Ասունց դիւրը դեպի կը-

րօնակսնոքիւնը:

Մինչև հոս մեր պարզած պատմութեան փիլիսոփայութեան տեսակէտները ֆրանսական մեծ յեղափոխութիւնէն առաջ էին, երբ հասարակական կեանքը կա-

տարեւապէս արժնցած չէր և ընկերական կարգերը ղեռնախնական ձևերով էին, ևրբ մեքենական, գիտական, վիճակագրական տեղեկութիւնները այնքան մեծ պաշարներ տւած չէին: Բայց վրայ հասաւ ֆրանսական մեծ յեղափոխութիւնը. արագացաւ հասարակական զարգացման ընթացքը, որով փոխւեցան հին ֆէոդալական օրէնքները: Մտաւոր հորիզոնէն շառաջիւնով յեա քաշւեցաւ տգիտութեան մատախլապատ վարագոյրը, և ևրբեան ևկան նոր գաղափարախօսներ: Հպարտացաւ նոր սերունդը, ու արհամարհական հայեացք մը նեակց զէպի հինը, զէպի աւատական օրէնքները, կաշկանդիչ և խաւարամիտ կղերականները. մէկ խօսքով նա ծաղրեց ամբողջ անցեալը, շար, տգիտութեան որջ համարեց և իւր որոնող աչքերը ուղղեց զէպի հեռմէն... տպագան: Նա կ'երազէր քաղցր կեանքը՝ երանաւէա հանգստութեան մէջ և բարիքներուն մեծ միջոցը իւր ժամանակի գիտութիւնը կ'ընդունէր: Վերջապէս XVIII դարը Վոլդեռի, Գիդրօի, Հօլբախի, մէկ խօսքով Ֆրանսական լուսաւորիչ և մատերիալիստներուն դարն է: Այս շրջանի հասարակական երևոյթները այնքան բարդացեր էին, որ մարդիկ միշտ կ'ուզէին իրական կեանքը ընդհանրացնել և պատճառի ու հեռեանքի էութիւնը դուրս բերել, այսինքն ընդհանուր առաջգիմութեան ընթացքը բմբռնել, «փիլիսոփայել», ինչպէս որ կ'ըսէին իրենք: Վոլդեան է առաջին անգամ «պատմութեան փիլիսոփայութիւն» բացատրութիւն գործածողը. նա պատմութեան վրայ «փիլիսոփայօրէն» նայիլ ուղեր է:

Լուսաւորիչները խոշոր բուռժուազիի գաղափարախօսներն էին. որոնք նկատի ունէին միայն այդ գասակարգի շահերը: Ասոնք կ'արհամարհէին սամիկը, այսինքն այն գասակարգը, որու ուժով հին կարգերը տապալեր և ներկայ գրութեան հասեր էին: Վոլդէն ու

Դիզրօ վայրենի կը համարէին ռամիկը . «Տգէտ տարրը կոպիտ և անկիրթ է ու կը մնայ, պէտք է միայն զայն լծել, քշել, կերակրել» կ'ըսէին անոնք :

Ըստ ասոնց այս երկրին մէջ, դասակարգերու գոյութիւնը անխուսափելի է, որմէ մէկը՝ անպայման հարուստ և կառավարող, իսկ միւսը՝ ազքատ և կառավարուող պէտք է լինի : Ասոնք պատմութեան զարգացման և քաղաքակրթութեան յառաջացման ազդակը՝ դաստիարակութիւնը կը համարէին : Պէտք է շրջապատը բարձրացնել, լուսաւորել, որպէսզի ժողովուրդը արգելք չը լինի յառաջդիմութեան : Երկրորդ ազդակը պետքի ունի է՝ բայց այնպիսի պետութիւն մը, որը փիլիսոփաներու միջոցաւ կը կառավարուի : Բայց պետութիւնը պայմանաւորող և դրդող ոյժը հասարակական (այսինքրն բուրժուազական) կարծիքն է :

Ուրեմն պետութիւնը, ժողովուրդը կառավարելու համար, անոր կարծիքը պէտք է ասնէ :

Կարծիքի, բանականութեան պաշտամունքը Վոլդէրի մօտ շատ բարձրացաւ : Հնր անկումը և նորի բարձրացումը անոնց աչքին յանկարծական երևոյթներ էին : Սոքա պատմական իմացութեան մէջ շատ առաջ գացած չէին, խոր ուսումնասիրութիւններ բրած չէին, որով և օրէնքներու աստիճանական զարգացումը չէին կրնար գտնել . այս պատճառաւ էր որ հասարակական վերոյիշեալ փոփոխութիւնը իրենց աչքին հրաշք կ'երեւար : Այս հոգեբանութիւնը աւելի պարզ կը տեսնուէր Վոլդէրի մօտ : Նա բանականութեան առաջանալը ոչ թէ աստիճանական, այլ՝ յանկարծական կը համարէր : Բանականութիւնն է, ըստ Վոլդէրի, որ հասարակութիւնը պիտի լուսաւորէ : Կեանքի բարիք համարուած մեքենան, զիտութիւնը, առևտուրը՝ բանականութեան արդիւնքներն են :

Իբրև բուրժուա-գաղափարախօս , թէ Վոլգէն և թէ միւսները , սոսկալի հակառակորդներ էին ֆէօդալական նութեան , կաթնոլիկութեան , եկեղեցիին և կրօնին : Ասոնք կուզէին որ քաղաքակրթութիւնը և պետութիւնը կեդրոնանան նոր մտաւոր սերունդին ձեռքը , որպէսզի կամաց կամաց վերջ տան կրօնին :

Այդ բանը կ'ստիպէր զանոնք միշտ Չինաստանի՝ պետական կազմը օրինակ ցոյց տալու , հո՛ս կը գտնէին կրօնին հակառակ դասակարգ , և հոս կրօնը ենթարկւած էր պետութեան : Այդ պատճառաւ անոնք այդպիսի իրաւակարգի անխոփոխութեան կողմնակից էին . սա այնպիսի միջոց մ'էր , որով անոնք թոյլ չէին տար որ հնի կրօնական կարգերը վերականգանան : Ամենէն շատ ծաղրազր Վոլգէնն էր . Լութէրի համար կ'ըսէր թէ նա քաղաքական և եկեղեցական վէճերու մէջ զանեղ առաջնորդներու և անոնց էնթրիքներուն գործիքն է :

III

Փան-Փաֆ Ռուսօ . « հասարակական Դաշինք » 1762 . —

Յարձակում ժամանակի մշակոյցի վրայ . — Պատկերական ազդակը՝ Օրենքը . — Յե՛ս դեպի բնութիւն . — Մեքի և Շիլլեր . —

Լուսաւորիչներէն զատ , ուրիշ հոսանք մըն ալ կար , որը հակառակ դասակարգի՝ այսինքն քայքայող գիւղացիութեան և սեփականազուրկ արհեստաւորներու արտայայտիչն էր : Այս հոսանքի ներկայացուցիչները կը բողոքէին նոր քաղաքակրթութեան դէմ , որը ֆեոսակար և անբարոյացնող կը համարէին : Այդ ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչները Մէլե և Փան-Փաֆ Ռուսօ էին : Վերջինիս գլխաւոր երկերն են՝ « Մարդոց

մէջ եղած անհաւասարութեան առաջացման և հիմքի մասին դատողութիւն» (1753), «Հասարակական դաշինք» (1762), ուր կը խօսի պատմութեան փիլիսոփայութեան կարեւոր խնդիրներու, քաղաքակրթութեան և պատմութեան ծագման մասին :

Քահանայ Մեյիկն աղքատ դասակարգի կեղեքման համար շատ կը ցաւի : Նա կը կարծէ թէ պատմական ներկայ ուղղութեան կարելի է ուղիղ ընթացք տալ, այդ ալ, նախնիքներու նման եղբայրական ընտանիքներ կազմելով կրնար ըլլալ :

Ռուսո թշուառ դասակարգի երզը աւելի բարձրերէն երգեց, նա այդ ցաւերուն, թշուառութիւններուն աւելի մօտէն ծանօթ էր և կսկիծով կը տեսնէր թէ ինչպէս արհեստաւորը և գիւղացին, չղիմանալով խոշոր առևտրականներու տնտեսական մրցման, խորին աղքատութեան կ'ենթարկուէին : Նա կը փառարանէ նախկին նահապետական տնտեսական կարգը, սովորութիւնները, կեանքը, ու կը ծաղրէ, անբարոյական կ'անուանէ ներկայ ամբողջ մշակոյթը — գեղարւեստը, թատրոնը և այլն :

Ռուսո և Մէյէ պատմական ընթացքին ազդակը կը համարէին օրէկի : Այսինքն մարդիկ, պետութիւնը, և թէ արդարասէր լինին, կրնան հաւասարութեան հիմունքով դաշինք կապել և վերջ տալ ներկայ երբեուն և անապահով դրութեան : Պէտք է մարդը դարձնել զէպի բնութիւնը, կ'ըսէր Ռուսօն, հոն անարատութիւն կայ, իսկ հասարակութիւնը՝ դասիարակութեան միջոցով կարելի կրթել : Մարդիկ իծնէ ազատ են, մարդկային հասարակութիւնն է, որ զանոնք կը շղթայէ, անազատ կը դարձնէ. դաստիարակութեան և պետական օրէնքներու միջոցով, կարելի է դարձեալ նախնական ազատութիւնը ձեռք բերել :

Ռերեմն ասոնք ալ՝ լուսաւորիչներու նման, պատ-


մութեան ազդակը մարդոցմէ կախած կ'ընդունէին . այդ՝ դաստիարակութիւն և օրէնքն էին : Մինչ լուսաւորիչները բանականութեան մեծ տեղ կուտային , ասոնք՝ կրօնին : Թէպէտե ամէն բան դաստիարակներէ և օրէնքներէ կախած էր , բայց յամենայն զէպս ասոնք ալ Ասուծոյ պիտի ենթարկւէին , անոր օրէնքներուն պիտի համաձայնէին : Ժողովուրդը պիտի հպատակէր հաւատքի , սիրոյ և պետութեան :

Մէքլիի և Շիլլերի գրածները , մանաւանդ վերջինիս «Աւագակներ»ը , եկան շեշտելու Ռուսոի իրաւացի բլլալը , և բողոքելու ժամանակի օրէնքներուն դէմ , և կոչ բրին վերագառնալու զէպի անցեալի բնական կեանքը :



Բ . Գ Լ Ո Ւ Խ

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԷՕՐԻՆ



I

VIII դարու կեսնի զարգացումը — Հերդեր՝ պս-
մութեան փոխադրութեան հիմնադիր — Յախ-
սենական զարգացման քերիկ — Պսսմութեան
սպասիր՝ արսափին բնութիւնը եւ Ասուծմի
սրած ընդունակութիւնները :

Մինչև հոս մեր նկարագրած աշխարհայեացքները
միշտ անցեալը նկատի ունէին եւ իրենց օրէնքները ան-
կէ կը հանէին (միայն բացառութիւն կը կազմէր եկեղե-
ցիական հայրերու դէօրին) : Անոնք մասնաւորը ընդհա-
նուր դէպքերէն չէին հանէր, որով իրենց դէօրին
մասնաւոր բնաւորութիւն կը կրէր :

Բայց XVIII դարուն արդէն կատարւած էին ար-
ւեստի մեծամեծ գիւտեր, հասարակական վճռական յե-
զաշքումներ, վաղուց արդէն երկաթուղին եւ շոգենա-
ւը անսպաս դաշտերու եւ ծովերու անդորրութիւնը կը
խանդարէին : Մարդկային միջավայր փոխուելով, փոխ-
ւած էին նաև մարդոց վարելակերպը, մտածելակերպը :
Ինչպէս արտադրական միջոցներու յարաբերութիւնը,
նոյնպէս մարդոց գործունէութիւնը ու խորաթափանց
մտքի թռիչքը սրնրթաց էին դարձեր :

Տիեզերական շարք մը գաղանիքներ արևի առաջ
հանւած էին. ընկերային կեանքի ամենամութ առեղծ-
ւածներէն շատերը կը լուծւէին : Կենդանական եւ բու-

սական աշխարհի աստիճանական զարգացման և անոնց տեսակներու փոփոխման թէորին գտնւած էր. մարդու և բնութեան մէջ եղած կենսաբանական կապի մասին շատ կարևոր յայտնութիւններ եղած էին :

Իրերու այս գրութեան մէջ, XVIII դարու կէսէն սկսած, հնարաւոր էր մարդկութիւնը իրրև ամբողջութիւն մ'ըմբռնել : Բնականաբար պատմութեան մասին եղած գիտութիւնն ալ իւր սահմանները պիտի ընդարձակէր և աւելի ընդգրկող պիտի դառնար :

Այսպէս ալ եղաւ. այս դար ծնաւ Հեղեբը, պատմութեան փիլիսոփայութեան լուրջ հիմնադիրը : Սա է որ մարդկային զարգացման շրջանը ամբողջութեան կը բերէ ու դիտիրլինի կ'ենթարկէ : Իւր «Մարդկային պատմութեան փիլիսոփայութեան խաւան» անունով գրքի յառաջաբանի մէջ (1784-87) կ'ըսէ. «Պէտք է առանձին գիտութիւն մը՝ պատմութեան փիլիսոփայութիւն անունով» և կ'որոշէ անոր առարկան, որ է մարդկային քաղաքակրթութեան առաջացման և զարգացման խնդիրը :

Թէպէտև Վիկին էր, որ առաջին անգամ փորձեց մարդկային պատմութեան օրէնքները գտնել, բայց անորը՝ լսկ փորձ մնաց, իսկ Հէրդէր, տարբեր ուղղութեամբ, աւելի ամբողջացած կերպով կը գծէ մարդկային պատմութեան զարգացման ընթացքը. Վիկինի թէօրևով զարգացումը Երջադարձական է, իսկ Հէրդէրինը՝ յաւիտեանապէս յառաջդիմող :

Ինչպէս ըսի, նախկին տեսարանները միշտ անցեալի կրկնութիւնը նկատի կ'ունենային, իսկ Հէրդէր անցեալը անդառնալի, իսկ յառաջդիմութիւնը անվերջ ու անընդհատ կը համարէր : Թէ բնութեան և թէ մարդկային կեանքին մէջ, յառաջդիմութիւնը Աստուծոյ կողմէն նախադրւած ճանապարհ ունի, որով նա կը ձգտի

միշտ առաջ երթալ :

XVIII դաքու յեղափոխութեան զաւակը , յառաջ-
դիմութեան և քաղաքակրթութեան որդեգիրը — Հէր-
դէր — ուրիշ կերպ չէր կրնար մտածել :

Մարդկութեան պատմութեան զարգացման հիմուն-
քը , ըստ Հէրդէրի , այն էր՝ ինչ որ են արեգակնային
սիսակմի , երկրի կեղեւի , կենդանիներու և բոյսերու
յառաջացման տեսութիւնները : Բոյսը զարգացման ըն-
թացքին մէջ կը կենդանանայ՝ կենդանին և բոյսը կեն-
դանութիւն կուտան մարդուն և այսպէս փոխադարձա-
բար առաջ կուգայ աշխարհի անընդհատ յառաջդիմու-
թիւնը : Մարդը երկրի զարգացման վերջին օղակն է ,
բայց սպազայ զարգացման առաջինը պիտի լինի : Մահ
գոյութիւն չունի . արարածները անմահ են :

Հէրդէրը հաւասարապէս ուշադրութիւն կը դարձնէ
կեանքի զարգացման թէ՛ ազգակի և թէ՛ անկէ յառա-
ջացած մշակոյթի վրայ : Զարգացման ազդակներն են՝
արտաքին բնութիւնն ու Աստուծոյ մարդու մէջ դրած
ընդունակութիւնները . — ահա այն երկու ազդակները ,
որոց վրայ կը հիմնուի ամբողջ գիւլգիւրը (մշակոյթը) .
թէ նիւթական աշխարհի և թէ՛ մարդկային կեանքի
զարգացումը իրարու հետ զուգորդւած են :

Ըստ Հէրդէրի , կլիման շատ կ'ազդէ մարդու հոգ-
ւոյն և մշակոյթի վրայ , սակայն թէ՛ մարդկային և թէ՛
Ֆիզիքական բնութեան մէջ կը տիրէ Աստուծոյ հոգին :

Ամենավայրենիներու մէջ անգամ , կ'ըսէ Հէրդէր ,
կայ այնպիսի օրէնք , որպիսին երկնային մարմիններու
մէջ կայ : Մարդու բնութագրին մէջ եղած այդ օրէնքները
կը կոչուին իւմանիզմ , այսինքն բարձր բանականութիւն
և սէր դէպի ուրիշները :

Մշակոյթի զարգացմամբ , ատունք աւելի ու աւելի
կը յառաջդիմեն և կրօնի միջոցով կը հասնին Աստուծոյ

կողմէն տրւած բարձր և կատարեալ նպատակին : Ըստ
Հէրզէրի , «կլիման ոչ թէ կ'ստիպէ , այլ կը թեքէ» : Նա
կլիման այնքան զօրեղ չէր համարէր , որքան Մոնթէս-
քիօ :

Հէրզէր Գերմանիա կ'ապրէր , ուր աշխարհնազրա-
կան ղիրքի և արգիւնարերութեան շատ չ'զարգանա-
լուն շնորհիւ , դեռ երկրին ամբողջ բաժան-բաժան մա-
սերը միացած չէին , այսինքն գերմանական պետութիւ-
նը դեռ կազմւած չէր . հետեւաբար պիտական գաղափարն
ալ չիկար : Իրերու այդ վիճակը մեծապէս ազդած է
Հէրզէրի թէորիին վրայ : Նա՝ մեծ տեղ կուտայ բնական
պայմաններէն առաջացած ազգային առանձնայաւկու-
րիւններուն և ընդունակութիւններու տարբերութեան .
մարդոց մէջ միայն իւմանիզմը ընդհանուր կը համարէր ,
բայց ոչ թէ պետութիւնը և դասակարգերը :

II

Գոնդրուկ .— Աննաստիակոտիանի զարգացումը — և
Պենդալի բարսակաւի բարոյագիտութիւնը .— Վի-
լիալ Գոդիլի .— Պասնոքեան ազգակը՝ աննասի
ագուս կամիր .— Ժողովք Տը Մեսրո .— Շիգիշ
.— Շարպարիան .— Յետ դիպի կախնիխ .—
Պասնոքեան ազգակը՝ խօսքը :

Գոնդրուկ նոյն դարու զաւակն է , նոյնիսկ ֆրան-
սական մեծ յեղափոխութեան մասնակից ժիրոնդիստ է :
Նա լաւ բմբունած է մշակոյթի և անհատի դերը , ատոր
համար կը փառաբանէ երկուսն ալ : Սա ալ կ'ընդունի
մեծական յառաջդիմութեան թէորին : Գիտութեան շը-
նորհիւ , կ'ըսէ սա , ապագային կը վերջի անհատա-

կանութիւնը . կը մնայ ընդհանուր մարդկութիւնը , իր-
բև մէկ ամբողջութիւն : Հոս կը տարբերի Հէրդէրի յա-
ռաջդիմութեան և հաւասարութեան գաղափարէն . բառ
որում , ազգային առանձնայատկութիւնները երբէք չեն
վերանար և մէկ ամբողջութիւն չեն դառնար :

Գոնգորսէ՛ ժողովրդական զանգւածին մեծ դեր կը
յատկացնէ . անհատներն ալ մեծ դեր ունին , կ'ըսէ , սա-
կայն անոնց ունեցածը՝ զանգւածի արդիւնքն է :

Գոնգորսէ՛ որպէս ֆրանսական բուրժուազիի գա-
ւակ և տիրող օպօռախնիստ (պատեհապաշտ) դասակար-
գի գաղափարախօս , կը հակառակի Ռուսօի բոմանտիկ
և հակաքաղաքակրթական հոսանքին . որովհետև այն ինչ
որ անտեսապէս քայքայող դասի համար գառն է ,
ընդհակառակն բուրժուազիի համար կենսաւէտ է :

* * *

XVIII դարու կէսէն սկսած , անհասականութեան
գաղափարը զօրեղ կերպով աճիլ կը սկսի : Արդիւնարե-
րութեան , ճարտարարեւեստի մէջ անհատի դերը բաւա-
կանին զգալի դարձած էր : Առևտուրի հիմքը անհատա-
կան նախաձեռնութիւնը կը համարէր : Ամբողջ բանա-
կանութեան և մտածողութեան կեդրոնը անհատի շահն
էր : Անհատը իր շահէն դուրս ոչինչ կը ճանաչէր :

Այս շրջանին լոյս կը տեսնէ Պենդամի (1748—82)
բարոյականութեան մասին թւարանական եղանակով
գրւած գիրքը՝ նա բոլոր բարոյական տեսութիւնները
անտեսական հաճոյքի և ահաճութեան վրայ կը հիմնէր :

Անգլիացի Վիլիամ Գոդլիինը (1793) անհատակա-
նութեան տեսութիւնը այնտեղ հասցուց որ , պետութիւ-
նը ոչինչ կը համարէր . « Ազատ թողէ՛ք անհատները ,
որ իրենց կամքի համաձայն ինչ կ'ուզեն ընեն , և քիչ
ժամանակէ յետոյ մշակոյթը իր կատարելութեան կը
հասնի » :

Ասոնց կարծիքով պատմութեան զարգացման ազդակը՝ անլասի ազգաս կալլն է, որը անձնական տնտեսական շահերով կը պայմանաւորուի: Հասարակութիւնը իրրև ամբողջական մարմին, ասոնց համար գոյութիւն չունէր:

Անհատի այդպիսի ազատութիւնը մեզ մինչև հոն կը տանի, կրտէին ասոնք, ուր կ'ոչնչանայ նիւթական հաւասարութիւնը, ուրեմն և կռիւր՝ որու հիմերը ժամանակակից անարդար արտօնութիւններն են:

Ասոնց կարծիքով, այդ անսահման ազատութիւնը անհատի բնութեան մէջ իսկ կայ, զոր նա բնութենէն ժառանգած է: Բնութիւնը անհատներու վարմունքը կը ներդաշնակէ:

Ասոնք կողմնակից էին յաւիտեական յառաջդիմութեան:


* *

Մենք առաջ տեսանք որ ռէակտիօնի դրօշ պարզողները, մանր արդիւնարերութեան և քայքայող գիւղացիութեան գաղափարախօսներն էին, սակայն հիմա այդ ձայնը ֆէօտալ-պապականութեան բանակէն կուգար:

Սորա նորագոյն մշակոյթը հաշտ աչքով տեսնել չէին կրնար:

Ասոնց մէջ աչքի ընկնողներն էին Բօնալդ, Ժոզեֆ Տր Մեսդր, Շլեգել, և Շարօպրիան: Ըստ ասոնց՝ բարիի թագաւորութիւնը այն օրէն սկսաւ, երբ Հոբսը (յայտնի փիլիսոփայ) պատմութիւնը մարդու գործ համարեց:

Ասոնք սկսան անցեալ կեանքը, յատկապէս Հնդկականը՝ ուսումնասիրել: Բօնալդը լուսաւորիչներու ամենամեծ սխալը այն կը համարէր, որ անոնք կը կարծէին թէ՛ ճշմարտութիւնը մարդոց ձեռքով, գիտութեան մի-



ջոցաւ գտնել կարելի է : Այն ինչ՝ ճշմարտութիւնը արդէն գտնուած էր , մեզմէ առաջ կար , Աստուծոյ արւած էր :

Ամբողջ մարդկային մշակոյթի ազդակը՝ խօսքը կը համարէին : Շլէգէլի այս միտքը « հոգեբանական ուղղութեան » մէջ առաջին արտայայտութիւնն է : Խօսքը մտքէն խելացի է . եթէ աշխարհը կ'ուզենք ճանչնալ , պէտք է բառերը վերլուծենք և հասկնանք խօսքի միտքը :

Ըստ Շլէգէլի , պատմութեան փիլիսոփայութեան գործը պէտք է լինի ցոյց տալ մարդու մէջ Աստուծոյ կողմէ արւած ընդհր , որ մարդը կորսնցուց իր իյնալու (Աղամի մեղքի) ժամանակ :

Ճարտպնիան ամենաքաղաքակիրթ կեանքը հնդկականը կը համարէր , ուր չկար մշակոյթ . իսկ Տը Մէսթոը՝ այդ հռչակաւոր ունկսիօնէն , այդ իսկ աւելի կը գրտնէր . անոր կարծիքով նախկին մարդիկ շատ քաղաքակիրթ էին , որոնք կամաց-կամաց իյնալ սկսան . ներկայ վայրենիները նախկին մշակոյթի մնացորդներն են . ուրեմն գրական բովանդակումն վերսկսած էր :

Իշխանութիւնը և հպատակութիւնը բնական բան կը համարէին . որդին՝ հօր , ժողովուրդը՝ պետութեան և պապին միշտ պէտք է հնադանդին :

Տը Մէսթոը կը փառարանէ հաւատաքննութիւնը (inquisition) . բարձր կամքի մը գոյութիւնը պէտք էր որ միշտ մարդուն ազդարարէր , « գու մոլորւած ես » . այդ կամքը պապն է , որը պետութենէն ալ բարձր է :

Ասոնք զէմ էին անհատականութեան գաղափարին . ամբողջ մարդկութիւնը օրգանական միութիւն մ'է , որ կը զարգանայ Աստուծոյ խօսքով :



Գ . Գ Լ , Ո Ի Խ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

I

Սկն Սխմնն .— Պասնութեան սզդակը բանակաւուրիւ-
նրն և արդիւնաբերութիւնն և .— Պեսութեան և-
րեք աւսիւանները .— Սկն Սխմնն՝ իս-օ
սիս սուխալիս :

XVIII դարու վերջին գաղափարաբանները նկատելով որ՝ ամբողջ արդիւնաբերական զարգացումը , անոր խո-
շոր ու ընդհանուր դերը կապիտալիստի , վաճառականի ,
սեղանաւորի , գիտնականի և բանւորի միջոցով միայն
հնարաւոր կը լինի կոչ , կ'ընէին որ բոլորը միանան և
մէկ «օրգանական» կազմակերպութիւն առաջ բերեն :
Այս տեսութեան հիմնադիրը Սէն-Սիմոնն էր :

Թէպէտ Ս . Սիմոն հասարակական զարգացման ազ-
դակը արդիւնաբերութիւնը (production) կը համարէր ,
բայց այս ալ զիջնականներու շնորհիւ առաջ կուգայ .
ուրեմն էական ազդակը՝ գիտնականի բանականութիւնն
է : Այդ պատճառով կ'առարկարկէր որ պետութեան մէջ
կառավարիչները փիլիսոփաներ լինին :

Ս . Սիմոն հասարակութեան մէջ դասակարգային
բաժանում կը տեսնէ , (մինչև այդ ստեն դասակարգա-
յին զանազանութեան հասկացողութիւնը շատ թոյլ էր)
որը առաջ կուգայ անտեսական հողի վրայ : Իսկական
պատմութիւնը , ըստ Սէն-Սիմոնի , ոչ թէ անտեսապէս

տիրոջներու կենսագրութիւնը պիտի լինի, այլ՝ դասակարգերու, սեփականութեան բաժանման, տնտեսութեան և արդիւնաբերութեան կազմի պատմութիւնը: Այս արդէն պատմութեան մասին ճիշտ հասկացողութիւն մ'էր:

Սակայն նա միայն այսքանը կ'ըսէր. նա չէր ըսեր թէ՛ պատմութեան դարգացման ազդակը դասակարգային կռիւն է, և չէր ցուցնէր զայն վերջնելու միջոցները: Այս հարցերուն Մարքսը յետոյ պատասխանեց: Սէն Սիմոն կը կարծէր թէ միայն դաստիարակութեամբ և օրէնփոյ, այսինքն մարդկային բանականութեան թելադրութեամբ կարելի է դասակարգերը հաշտեցնել, մասնաւոր սեփականութիւնը ընդհանուր դարձնել և յառաջդիմութիւնը իր բարձրագոյն աստիճանին հասցնել:

Պետութեան մը և թագաւորի մը դերը «կազմակերպչական գործը» պէտք է լինի: Ս. Սիմոն այսքան կը համակրի «կազմակերպութեան», որ կը փառաբանէ պապականութիւնը իբրև ամբողջութիւն մը:

Պետութիւնը, ըստ Ս. Սիմոնի, երեք մասերէ բաղկացած պէտք է լինի. ա) — Գիւտերու Սենեակ, ուր պէտք է նստին երկրաչափները, բանաստեղծները և նրկարիչները՝ որոց պարտականութիւնն է հասարակական աշխատանքի ծրագիրը մշակել և պատրաստել. բ) — Հետազօտութեան Սենեակ, ուր պէտք է մասթեմատիկոսները և բնագէտները նստին՝ որոց պարտականութիւնն է քննել և ստուգել վերև առաջարկւած ծրագիրը, և կրթութեան ուղղութիւն տալ. գ) — Կատարողական Սենեակ, որը կազմւած պէտք է լինի հարուստ արդիւնաբերողներէ, որոնք պետութենէն յատկապէս կը նշանակին՝ պետական գոծերը կարգադրել տալու համար:

Այս է Ս. Սիմոնի երեակայական ծրագիրը. իր կարծիքով՝ այսպիսի ծրագրով մը կարելի է վերջ տալ

անտեսական անհաւասարութեան, նպաստել մշակոյթին (culture) և իրականացնել սօսխալիզմը :

II

Օգիւստ Կոնսը — Հասարակական կեանքի ռոմանտիկական կողմը. — Պասնուքեան ազգայնը՝ գիտական միսիը. — Մսաւոր երեք շրջանը. — Կոնսը՝ պօգիսիսիս. — Կոնսը՝ հայր սօսիօթիի. — Անհասի դերը ճշիւն է :

XVIIIրդ դարու վերջը և XIXրդ դարու սկիզբները հասարակութեան մէջ լաւատեսութիւնը դարձեալ թուլնալ կ'սկսի : Անհատականութեան պաշտպան բուրժուա գաղափարաբանները առաջւան նման չէին կրնար այլևս կեանքը փառաբանել :

Հասարակական կեանքի մէջ այս անգամ նախկին արհամարհւած դասակարգը — բանւորը — գլուխ բարձրացուցած, ապստամբած էր : Բուրժուազիի աչքին առջև ապագայ անմխիթար և սարսափելի օրեր կը պատկերանային և այս անգամ, իր դերը փոխելով, կը ջատագոյժէր բոմանդիզմը, այսինքն այն տեսակ կեանք մը, ուր բացի ներկայէն՝ ամէն բան կար : Ներկայ կեանքի պատկերը տալ, կը նշանակէր մասնանշել բուրժուազիի կեղեքումը և ամէնքը գրգռել անոր դէմ. այլ ևս կեանքը բողոք էր դարձեր :

Ամէն տեղ գիւղացիներու, արհեստաւորներու և բանւորներու մէջ համախմբումներ տեղի կ'ունենային, որոնք կրօնական բնոյթ ունէին. այս առնն մէջտեղ ելաւ նաև մասնականութիւնը : Ժամանակի նրատապ հարցը համախմբել և կազմակերպելին էր :

Այս գաղափարը Սէն Սիմոնի մօտ ուժեղ էր, բայց

հանդէս եկաւ նաև ուրիշ գաղափարախօս մը— Օգիւստ Կոնս:

Կոնսի «Դրական փիլիսոփայութեան դասընթացք» գիրքը լոյս տեսաւ 1837ին: Սա կողմնակից էր «կազմակերպութեան» և կը փառարանէր միջնադարեան կաթոլիկութեան կազմակերպութիւնը և Տը Մէսթրը: Սա իր ժամանակի անհատապաշտ երիտասարդութեան շատ հակառակ էր. ասոնց մէջ եսասիրութեան շնորհիւ ամէն բան կ'ոչնչանար: Սա կը ծաղրէ և կը քննադատէ բանականութեան պաշտամունքը, և Վոլդէրը մտաւոր անարշիստ կ'անւանէ:

Կոնսի գործնական կազմակերպչական տեսակէտը կարտայայտւի նաև անոր տեսութեան մէջ: Սա կ'ուզէ ամբողջ պատմական երևոյթները օրէնքի մը տակ բերել, ինչպէս է գիտութեան մէջ՝ ձգողական ուժը:

Մէն-Սիմոն հասարակական զարգացման ազգակը բանականութիւնը համարելով, միջավայրին (արդիւնաբերութեան) ալ մեծ տեղ կուտայ. իսկ Օգիւստ Կոնստ ամենամեծ տեղը բանականութեան կուտայ:

Հասարակական կեանքի յառաջանալու խիթանք մը տաւորականութիւնն է, կ'ըսէ: Եթէ միջավայրը, այսինքն հասարակական պայմանները ազգակ համարենք, ըսել է թէ գութանը եզներէն առաջ կը կապենք: Ամբողջ հասարակական օրգանիզմը, մարդկային կեանքի գործունէութիւնն ու յարարերութիւնը կը կառավարւին կարծիքով, իսկառով: Հասարակական օրկանիզմը տարբալուծողը, օրէնքներ գտնողը գիտական միտքն է:

Եթէ ներկայ հասարակութեան մէջ անիշխանութիւն, անբարոյականութիւն կը տիրէ, ատոր պատճառը ընդհանուր փիլիսոփայական սխառեմի բացակայութիւնն է: Առանց généralitéի, չկայ générosité, այսինքն առանց ընդհանրացման՝ չկայ մեծահոգութիւն:

Բնական ազդեցութիւնները, մշակոյթի տարրերը, մարդկային բնգունակութիւններն ալ մեծ դեր ունին. ասոնք կայուն գրութիւն ունին, որը շարժողը՝ բանականութիւնն է:

Կոնար մարդկային մտաւորական շրջանը երեքի կը բաժնէ, որու փոփոխութենէն կախած է հասարակական կեանքի ալ փոփոխումը. ա) Աստածարանական կամ ֆիկտիւ շրջան, երբ մարդիկ որոշ չափով ֆանդէզիի ազդեցութեան տակ կ'իջնան ու շրջապատը գերբնական երևոյթներով կը բացատրեն. բ) Բնագանցական կամ վերացական (abstrait) շրջան, երբ կեանքի երևոյթները վերացական խտնով կը բացատրեն, երևուոյթներու վերջին հիմունքը վերին եութեան մէջ կը գտնեն. գ) Գիտական-գրական շրջան՝ երբ մարդիկ գիտակցութեան միջոցով և գիտական մեթոտով կը բացատրեն և կ'ընդհանրացնեն օրէնքները:

Որովհետև հասարակական զարգացման (էվոլյուսիոնի) ազդակը միտքը և անոր երեք գրութիւններն են, ուստի անոր խրաքանչիւրին ինքնակամ փոփոխելովը, կը փոխի նաև նոյն հասարակական անտեսութիւնը, կրօնը, բարոյագիտութիւնը, գրականութիւնը և այլն: Այդ պատճառով գիտական դասաւորման մեծ նշանակութիւն կուտար, որովհետև ասոնք առանձին առանձին կ'ազդեն մտքի և այդ կերպով ալ՝ հասարակութեան վրայ: Կոնար գիտութիւնը այսպէս կը դասաւորէ՝ մաթեմատիք, աստղագիտութիւն, ֆիզիք, քիմիա, կենսաբանութիւն (biologie), սօսիօլօթի, (հասարակագիտութիւն). այս վերջինս զեռ վերացական կը համարէր:

Կոնար այս գրական գիտութիւններուն մեծ տեղ տալուն համար զբազաշտ (positiviste) կը կոչէի:

Կոնար շեշտելով մարդկային կեանքի միութիւնը, համախմբութիւնը և անոր յարաբերութիւնները, կ'ըսէ

որ ասոր ներքին կապը տարրալուծողը սխտէմի՞ զընող և օրէնք գտնող նոր գիտութիւն մը պիտի հանդէս գայ «սօսիօլօփի» անունով . այսպիսով Կոնտ, առաջին անգամ լինելով, այդ գիտութեան հիմը կը դնէ, որով կը կոչուի («Նայր սօսիօլօփի») : Բայց որովհետև հասարակական յարաբերութեան շարժիչ-ազդակը միտքն է, ապա այդ մտքի պատմութիւնը՝ ընդհանուր պատմութեան մէջ պէտք է պարզուի, կ'ըսէ :

*
* *

Կոնտը անհատին ոչ մէկ յեղաշրջիչ դեր կուտայ, նա (անհատը) հասարակական հոգեբանութեան էվօլյուսիոնի արդիւնքը, անոր գործողութեան պաշտօնակատարն է . ամենամեծ հանձարներն անգամ չեն կրնար հասարակական յեղաշրջում առաջ բերել :

Կոնտ՝ հասարակական - հոգեկան օրէնքները կը նույնացնէ մեքենայական օրէնքներուն : Մարդկային հոգեկան գործողութեան պատճառը՝ Ֆիզիօլօփիով (բնախօսութիւն) կը բացատրուի : Հասարակութեան օրինաչափութեան պատճառը ոչ թէ հասարակական ազատ կամքն է, այլ այդ կամքէն անկախ բան մը :

Կոնտ՝ սօսիօլօփական և պատմափիլիսոփայական իր տեսութիւնները գրելու ատեն ընդհանուր վերացական հասարակութիւնը նկատի ունեցեր է :

Հոս մարդկութիւնը ընդհանուր միութեան մը բերելու և անոր օրէնքները գտնելու գաղափարը աւելի շեշտւած կը գտնենք :



III

Հէգէլ. (1770-1831)

Գերմանիոյ ֆալսֆալսան դրուքիւնը.— Բացարձակ իսկաի զարգացումը.— Հեզկէան տրիադը.— Հոգւոյ երեք սասիճանները.— Թեզ(thèse), սինթեզ (synthèse), սիսիթեզ (antithèse).— Հեզկէի տեսութեան պահպանողական եւ յեղափոխական կողմերը.— Ազատքիւն եւ անհրաժեշտքիւն :

Հէգէլէն առաջ, Եւրոպայի մէջ աբրող աշխարհայեացքը XVIII դարու Ֆրանսական մատերիալիստներու, այսինքն Գիտորի, Հոլբախի եւ Վոլթէրի աշխարհայեացքն էր : Ֆրանսական այս յեղափոխական գրականութիւնը դուրս էր եկած եկեղեցիի եւ պետութեան դէմ կուելու : Ֆրանսական յեղափոխական մատերիալիզմը նորագոյն բուրժուազիի լաւատես աշխարհայեացքի ծրնունդն էր, որը իր յաղթական նիզակը կը ճօճէր հիմնայատակ քայքայող ֆէօդալիզմի դէմ :

Ընդհակառակն Գերմանիոյ մէջ այդպիսի չարժում չկար : Ֆրանսական յեղափոխութեան ձայնը հոն իրական արձագանգ չգտաւ եւ ստիպեց բռնակալութիւնը աւելի ուժեղնալու :

Ատոր գլխաւոր պատճառը այն էր որ, Գերմանիոյ մէջ աւատականութիւնը դեռ ուժեղ էր եւ Ֆրանսայի նման յեղափոխական բուրժուազի յառաջացած չէր :

Բռնակալական պետութեան զօրութիւնը այն ատիճանի հասաւ, որ ամբողջ գրականութիւնը եւ փիլիսոփայութիւնը իր պահպանման եւ եղած կարգերը սրբ-

բազործելու վահան դարձուց :

Իբրև այդպիսին , Հէգէլի փիլիսոփայութիւնը մինչև այն ատեն եղածներու ամենազարգացածն էր , բայց նա յետադիմութեան համար ամենամեծ յենարանը դարձաւ :

«Ինչ որ իրական է , այն բնական է . և ինչ որ բնական է , այն իրական է» : Միապետութեան կողմնակիցները , որպէսզի պաշտպանէին Ֆրէտրիխ Վիլհէլմ Բ. Իրոնակալական պետութիւնը և խիստ գրաքննութիւնը , իրենց արդարացման հիմք դարձուցին սոյն բանաձևը . . . «Եղած կարգերը բաւական են» :

XVI դարու 10ական թւականներուն , Բէրլինի մէջ յետադիմականներու ջանքերով համալսարան մը բացւեցաւ , ուր պիտի դասախօսէր Հէգէլը : Սա իր ժամանակի տիտանն էր , որու համաշխարհային գրականութեան վրայ ունեցած ազդեցութիւնը երկար ատեն արող դարձաւ : Ասոր մասէն ետքը ամենէն շատ ազդեող աշակերաններն էին Շդրաուսը (Յիսուսի կեանքը գիրքով) և Կարլ Մարքսը (Կապիտալով) :

Հէգէլի աշխարհայեացքը ոչ միայն փիլիսոփայական սիստեմ մըն էր , իր իրաւունքի , կրօնի և այլ փիլիսոփայական մասերովը , այլ և բոլոր գիտութիւնները քննելու մեթոտ մը :

Մենք տեսանք որ Կոնսր աշխարհի իրական պրօսէն մեր մտքի զարգացման հետեւանքը կը համարէր , բայց Հէգէլը ատկէ հետո գնաց աշխարհը ոչ միայն մեր մտքի հետեւանքն է , այլ անոր արտացոլութիւնը : Նիւթական աշխարհը ոչ թէ այդպէս գոյութիւն ունի , այլ նա արամարանօրէն բացարձակ իստէն դուրս կուգայ : Աշխարհը՝ շօշափելի դարձած հողի է , հողին հասկնալու միջոց մ'է :

Մեր հողին կը պարունակէ այն բոլոր իմացութիւն-

ներքը, ինչ որ մարդս ունէր սկզբնական շրջաններուն . ներկայ մշակութական աշխարհը ոչ թէ մարդու աշխատանքի արդիւնքն է, այլ նա մեր մտքի վերջին խօսքն է, հոգիի ամենարարձր զարգացման պատկերը, այսինքն մեր այն մտքի, որը անցեալի ամբողջ աստիճանները ոտնակոխելով՝ ներկայ բարձրութեան հասեր է :

XIX դարու մէջ, կ'ըսէ Հէգէլ, երբ մեր միտքը կ'աշխատի դէպի անցեալը հայեացք մը ձգել և բմբռնել այն, ամիտփել և գնահանել անոր նշանակութիւնը՝ ներկայ մշակոյթի համար, — այդ կը նշանակէ որ հոգին արդէն հասեր է իր ինքնագիտակցութեան վայրկեանին :

Վերևը ըսածնուս պէս, ամէն բանի ազդակը, գոյութեան կենդանութիւն տուողը բացարձակ իսեան է, որուն ո՛ւր բնակիլը չգիտենք : Սա ինքն իր մէջ կը զարգանայ և իր այս զարգացման գործողութեան ատեն, շարք մը աստիճաններէ կ'անցնի . այդ աստիճանները իր մէջ են արդէն : Այդ իտէան իր բնական զրութենէն շատ հեռանալով, օտարնալով, բնութեան ձևով հանդէս կուգայ : Ներկայ իտէաի զրդումով բնութիւնը անգիտակցարար զարգանալ կ'սկսի, և բնութեան մէկ մասը կազմող մարդու մէջ՝ իտէան իր ինքնագիտակցութեանը կը հասնի : Հէգէլեան փիլիսոփայութեամբ մարդու մէջ եղած իտէան կամացկամաց բարձրանալ կ'սկսի մինչև այն աստիճանը, երբ հասած կը լինի իր նախկին զրութեան, այսինքն բացարձակին :

Ահա՛ թէ երկիրը, թէ հոգին և թէ մարդկութիւնը ենթակայ են այս տրամաբանական զարգացման : Հոգին երբոր առաջին անգամ՝ բնութեան (ուրեմն և մարդու) մէջ կը մարմնանայ, այդ անոր անգիտակցութեան շրջանն է . նա ինքզինքը չի հասկնար : Հէգէլը այդ շրջանը Արևելքը կը համարէր : Այդ՝ հոգիի թէգն է (զրութիւն) : Բայց երբ հոգին կամաց-կամաց ինքզինքը

ճանչնալ կ'սկսի, այդ արդէն Յունաստանի և Հռովմի ծագիկեալ շրջանի ասեմնն էր. այս վիճակով նա առաջի-սի հակադրութիւնն է. սա հոգիի անտիթէզն է (հակադրութիւն): Հոգիի զարգացումը կը շարունակուի և իր գիտակցութեան կը հասնի պետութեան բարձր ձևի մէջ, որպիսին ժամանակի գերմանական պետութիւնն էր, որը զարգացման վերջին աստիճանն է: Այս կէտէն կ'օգտուէին յետագէժ մտաւորականները և կը սրբագործէին բունակալութիւնը. այս կէտը Հէգէլի պահպանողական մասն էր:

Հոգին իր լրիւ զարգացումով, իր բուն դրութեան, այսինքն բացարձակ իտէաին կը հասնի, ուրեմն կը հաշտուի իր նախկին դրութեան հետ և կը կազմէ սինթէզ (համադրութիւն):

Ինչպէս կը տեսնուի, կեանքի մէջ միշտ կոխ և հաշտութիւն կայ, ինչ որ տեղի կունենայ հոգիի զարգացման պատճառով: Առանց հակադիր մտքերու, կրնէ Հէգէլ, շարժում չի լինիր. ուրեմն կեանքի էփօլիւսիօնը հակադրութեան մէջ է. Հէգէլի լեզուով «հակադրութիւնը յառաջդիմութիւն է» (der widerchpruch ist der fortleintende):

Հէգէլի գէորիէն պահպանողականութիւն եզրակացնելը զայն չհասկնալէն յառաջ կուգար: Թէպէտ Հէգէլը ինքն ալ իր վերոյիշեալ կէտով բունակալութիւնը կ'արդարացնէր, բայց իր տեսութեան մէջ կային այնպիսի կէտեր, որոնք կը հերքէին վերոյիշեալը և իր տեսութեան աւելի յեղափոխական բնաւորութիւն կուտային: Քանի որ կեանքի մէջ կայուն դրութիւն չ'կայ, և ամէն դրութիւն անպայման իր հակադրութեանը պիտի փոխուի, ապա ինչպէ՞ս կարելի է բունակալական միապետութիւնը մնայուն և վերջին ձևը բնդունիլ. — այս կը հակասէր Հէգէլի ամբողջ տեսութեան: Քանի որ

ամէն բանի հակադրութիւնը կայ, ուրեմն կայ նաև բռնակալութեանը. սա Հէգէլի տեսութեան յեղափոխական կողմն էր:

Ազատ դրութենէն անհրաժեշտութեան, այսինքն անազատի, բռնակալականէն՝ սահմանադրականի փոխիլը երբէք տարօրինակ բան չէ. ըստ Հէգէլի տեսութեան, ասոնք զիալէկտիկաի (տրամասութեան) հաշտ և բնական օրէնքներն են:

Հէգէլէն առաջ Կանտը խօսելով պատմութեան մասին, հարց մ'էր առաջադրեր թէ՛ ի՞նչպէս սլիտի հաշտեցնել այն միտքը որ, չնայած պատմութիւնը մարդուս ազատ կամքէն յառաջացած երևոյթ մ'է, բայց վերջը նա անկախ, առարկայական կը դառնայ:

Հէգէլի զիալէկտիկական օրէնքով այս հարցը վըճուած կը տեսնենք, այսինքն ազատ կամքը իր հակադրութեանը կը հասնի, որմէ ետքը կը հաշտի իր հետ և համադրութիւն (սինթէզ) կը կազմէ: Ուրեմն այդ հարցը հակասութիւն մը չէ, այլ տեսական բնական պրօսէ մ'է:

Սակայն Հէգէլի վճիտը բնագանցական էր: Թէ ի՞նչ էր այդ հոգին, ինչո՞ւ այդպէս կը զարգանար. — այդ հարցին Հէգէլը չը կրցաւ կամ չ'պատասխանեց: Աստոր պատասխանը իր աշակերտ Կարլ Մարքսը աւաւ, որը յետոյ կը տեսնենք:



IV

Սպեկուր .— Կենսաբանական և հասարակական օրգանիզմի հավանականութիւնը .— «Էվոլյուսիոնի»
սեղ «Պրոգրէ» .— Պատմութեան ազդակը՝
գիտակցական նպասակը .— Ենթակա-
յականութիւնը (subjectivité) :

Հասարակական կեանքի զարգացման հետ, կը զար-
գանայ նաև անրնդհատ յառաջդիմութեան գաղափարը :

Մշակոյթը հակայական քայլերով առաջ կ'ընթանար
և ամբողջ հասարակութեան միասորութեան գաղափա-
րը երթալով կը պարզէր. և ահա առաջ կուգայ օրգա-
նական պրոգրէի գաղափարը, որու ներկայացուցիչը
Սպեկուրն է :

Ասոր տեսութեան համաձայն, հասարակութիւնը
կենդանի էութիւն մ'է. նա իր մասերու շնորհիւ կը
զարգանայ և այդ զարգացման ընթացքին օրգանիզմի
և մասի յարաբերութիւնը այնքան կը խտանայ որ՝ ան-
հատ մասը ամբողջապէս հասարակութենէն կախած
կը մնայ :

Սպեկուր հասարակական օրգանիզմի (մարմնի) և
կենսաբանական (biologique) մարմնի ու անոնց գոր-
ծունէութեան մէջ մեծ յարանմանութիւն կը գտնէ :
Ինչպէս որ կենդանիի օրգանիզմին մէջ կայ «արտաքին
բջիջ» (էքստոսեմ), որը կը պաշտպանէ օրգանիզմը ար-
տաքուստ, և յետոյ «ներքին բջիջ» (էնտոսեմ)՝ ներ-
քուստ, ճիշդ նոյն երևոյթը գոյութիւն ունի նաև հասա-
րակական մարմնի մէջ : Հին ատեն «արտաքին բջիջները»
կուող խմբերն էին, իսկ «ներքին բջիջ»ները՝ կանայք,

գերիններ, և աշխատողներ. իսկ այժմ առաջինի տեղ պետութիւնն է, իսկ երկրորդին՝ արդիւնարեւրական գործունէութիւնը:

Ինչպէս կենդանիի մէջ կայ «բաշխող գործունէութիւն»՝ հասարակութեան մէջ ալ կան վաճառականներ: Կենդանարանական օրգանիզմի մէջ արեան երակներու և անոր շրջանառութեան փոխարէն, հասարակութեան մէջ ալ կան ջրանցքներ և երկաթուղիներ: Ինչպէս որ բարձր կենդանիի մէջ ջրային համակարգութիւնը մէկ տեղ, այն է՝ ուղեղին մէջ կը կեդրոնանայ, ճիշդ նոյն կերպով պետութեան բաժան-բաժան մասերը, միջնադարէն յետոյ մէկ պետութեան կը վերածւին: Իսկ թէ մարդկային հասարակութեան մէջ միութիւնը գիտակցարար կը կատարւի իսկ կենդանիի մէջ անգիտակցարար, Սպէնսէրը այդ այնպիսի երևոյթ մը չի համարեր որ հասարակութիւնը տարբերենք և բաժնենք կենսարանական կենդանիէն:

Հասարակութեան մէջ եղած բարոյական օրէնքները և մարդկային գիտակցող հոգին՝ բնութեան մէկ մասն են, անոր շարունակութիւնը, ուրիշ ոչինչ: Բնութեան և հոգւոյն, բնական և արհեստական մշակոյթի մէջ մեծ տարբերութիւններ չ'կան, այլ իրար կը լրացնեն:

Հասարակական բարոյականութեան և գիտակցական օրէնքները, իրենց զարգացման ընթացքին, գէպի բնութեան նպատակները կը գիմեն, և ամէն ատեն բնութեանը յարմարիլ կ'աշխատին. ուրեմն անոնք ոչ թէ բնութեան հակառակ են, այլ՝ համապատասխան: Այսպէսով ներկայ մշակոյթը, բուրժուական կարգերը և պետութիւնը, դասակարգային խարութիւնը, ոչ թէ պիտի վերնան, այլ իբրև բնական օրէնքներ, երթալով պիտի զարգանան և յարմարին բնութեան:

Մարդկանց խտելը այն պիտի լինի որ, բոլորն ալ հատարեն այդ գործողութիւնը: Օրգանիզմի անընդհատ զարգացումը՝ մեզ դէպի մեքենայականութիւնը կը տանի, այսինքն այնպիսի վիճակի մը, երբ հասարակութիւնը ինքն իր բնութեանը համապատասխանող մեքենական օրէնքներով շարժիլ կ'սկսի:

Հէղէլը զարգացման վերջին աստիճանը, համաշխարհային հոգւոյ ծերութիւնը և մնայունութիւնը կ'ընդունէր, իսկ Սպէնսէրը՝ բնական մեքենայականութեան յանդիւր: Սա է որ «էվօլյուսիօն» ի տեղ «պրոգրէ»ի գաղափարը կը փոխանակէ. առաջինի զարգացումը ներքին ազդակներու միջոցով տեղի կ'ունենայ, առանց ուրիշի գիտակցական զրգումին, իսկ երկրորդինը՝ (որ Սպէնսէրի ընդունածն է) սեփական գիտակցութեան զրգումով է, և կը ձգտի դէպի որոշ նպատակ: Ահա այս է հասարակագիտական երկու մեծ ուղղութիւններու հիմքը, առարկայականութիւն (օրժէկտիվիզմ) և ենթակայականութիւն (սիւբէկտիվիզմ):



V

Սիրժեկսիվիզը և օրժեկսիվիզը .— Ի՞նչ է սիրժեկսի-
վիզը .— Պասմութեան ազգակը՝ անհասի ազու
կամբը .— Միխայելովսկի, Մեյեր, Բիկկերս .—

Ի՞նչ է օրժեկսիվիզը .— Լանդերխս,
Քումպրովիչ և Բարս .— Ազգակը՝
կրեկսիս հոգեբանութիւնը .—

Ի՞նչ է սինթերիկ մոնիզ-
մը .— Վերչսքան :

Սիրժեկտիւ (ենթակայական) ուղղութիւնը այն է ,
որ յառաջդիմութեան ազգակը , անհատի կամ հասարա-
կութեան ղիսաւորեալ նպատակը կ'ընդունի , այսինքն
մարդկային պատմութեան զարգացումը , անհատի ազատ
կամքի թելադրութեան արդիւնքն է : Այսպիսի տեսու-
թեան մեծ հիմնադիրներէն մէկը՝ Ռուս յայտնի հասա-
րակագէտ Միխայելովսկին է : Ասկէ առաջ Բրունո-Բա-
ուէրը՝ Հէգէլի բացարձակ իդէաի տեղ մարդու գիտա-
կից հոգին ընդունած էր , որ պատմութեան առաջին
մղիչ ազգակը կը համարէր :

Ենթակայական (սիրժեկտիւ) մեթոտի համաձայն
անհասը , մանաւանդ քաղաքական և գիտնական հան-
ճարները , պատմութեան սրտէի մէջ մեծ դեր ունին :
Հասարակական զարգացման այս կամ այն ուղղութեամբ
առաջանալը անոնցմէ կախում է :

Անհատին , պատմութեան մէջ մեծ դեր յատկացնե-
լով , պատմական դեպքերուն ալ գլխաւոր դեր յատ-
կացուցած կը լինէին . այսինքն հասարակական պատ-
մական երևոյթները ոչ թէ անհրաժեշտօրէն առաջացած

դէպքերու գումարն է, այլ այսինչ կամ այնինչ թագաւորի, զօրավարի և այլնի պատահական ցանկութեան կամ դէպքի արդիւնքը:

Էդուարդ Մէյէրը այս ուղղութեան յայտնի պաշտպաններէն մէկն է. նա կ'ըսէ թէ՛ նկատի ունենալով ենթակայական (սիւբթէկտիւ) կամքի և պատահականութեան մեծ դերը, և մէկ ալ այն որ, պատմական դէպքերու գումարը անհատներու միայն մեկ անգամ կատարող ազատ գործունէութենէն բաղկացած է, ապա ուրեմն անկարելի է ըսել թէ՛ պատմութիւնը սիստեմատիկ (համակարգուած) գիտութիւն է, թէ՛ նա օրէնքներ ունի: Պատմութեան դերը՝ անհատական, միայն մէկ անգամ կատարող պատահարները արձանագրելն է, ուրիշ ոչինչ: Իսկ եթէ ընդհանուր պատմութիւնը ամբողջութիւն մը կը կազմէ, այդ ոչ թէ առարկայականօրէն յառաջացած դէպքերու միութիւնն է, այլ ենթակայականօրէն ստեղծուած հանճարներու արդիւնք: Ընդհանուր պատմութեան «միութիւնը» կախուած է պատմարանէն. նայած թէ ինչ գոյն կուտայ, անոր համաձայն ալ կը լինի պատմութիւնը:

Եթէ ևս ընկերոջս խնդիրքով դուրս կ'ելնեմ, կըսէ Մէյէր, ապա կրնամ և՛ դուրս չ'ելնել. գործողութեան պատճառը, ազդակը իմ հոգւոյս մէջ պէտք է փնտռել, այդ իմ հոգեկան յատկութենէն կախուած է, ինչ որ շատերու գիտակցութեարը անմատչելի կը մնայ, ուրեմն ազդակը չ'իմացիր: Ճիշտ նոյն բանը պատմութեան վերաբերմամբ ալ կրնանք ըսել: Անոր մղիչ-ազդակը ազատ կամքն է, որը անհատներու հոգեկան յատկութենէն կախուած է, իսկ վերջինս անմատչելի լինելուն համար, պատմութեան ազդակն ալ գաղտնի կը մնայ, ուրեմն և մենք չենք կրնար պատմութեան օրէնքները գտնել և գիտութիւն անւանել: Պատմութեան մէջ դէպքերու ան-

հրաձեռութիւնը և ազատութիւնը մեր մտածողութեան արդիւնքն են և ոչ թէ երևոյթներու մէջ առարկայականօրէն գոյութիւն ունին :

«Եօթնամեայ պատերազմ»ը Ֆրիարիխ Մեծի ազատ կամքի արդիւնքն էր և ոչ թէ՛ հասարակական անհրաժեշտութիւն մը : «Երկրորդ Բուճիական պատերազմ»ը Անիբալի կամքով առաջ եկաւ : Եթէ Անգլիոյ թագաւոր Ֆրիւսկ Ուր արու զաւակ ունենար, ամբողջ Անգլիան կաթողիկ կը մնար . բայց որովհետեւ զաւակ չ'ունեցաւ, անոր յաջորդեց Եղիսարեթը, այդ պատճառով ալ բողոքականութիւնը տիրող եղաւ :

Ենթակայական (սիւրժէկաիլիստ) զաղափարախօսներէն սմանք, ազգակը մարդ-անհատը կը համարին . բայց սմանք ալ կ'ըսեն թէ այդ անհատներու կամքերը պարտական են աւելի բարձր կամքի, որմէ կը թելազրւին . այդ բարձր կամքը՝ Ասուծոյ կամքն է :

Նոյն սիւրժէկաիլ (ենթակայական) տեսակէտի պաշտպան է նաև Բիկկէրսը . սխալ է, կ'ըսէ սա, պատմութիւնը սովրեցնել իրրև ամբողջութիւն մը . իրականը միայն մասնաւոր զէպքերն են, մեր մտածողութիւնը կամ սիւրժէն է որ անոնք կ'ամբողջացնէ . և որովհետեւ օրէնքը ամբողջական երևոյթներէ կը հանուի, կ'ըսէ Բիկկէրս, ուրեմն այդ օրէնքները երևակայական և սխալ են :

Ենթակայական (սիւրժէկաիլ) Մէյերը և Բիկկէրսը դուրս եկան օրժէկաիլիստներու (առարկայականներու) ղէմ, անոնց առարկելու : Այդ ատեն առարկայական կը համարւէին Լամպրեիս, Փուսպլովիչ և Բարս . ասանք ամբողջովին կը ժխտէին պատմութիւնը պատահական զէպքերէն կազմւած համարելը և կ'ընդունէին թէ պատմութիւնը օրինաչափական է : Պատմական զէպք ըսելով՝ ասանք ոչ թէ անհատականը կը հասկնային, այլ

նամայնականը, հասարակականը, իսկ մասնաւոր զէպ-
քերը, անհասաները ասոնց արդիւնքն են :

Մինչև հոս առարկայականները իրօք որ առարկա-
յական են, բայց ասոնք շարունակելով իրենց թէզը,
վերջին եզրակացութեամբ կ'ընդունէին որ, համայնական
զէպքերը համայնական հոգեբանութեան արդիւնք են,
իսկ ասոնց ազդակը՝ աննասական հոգեկան դրուբիւնն է:
Ուրեմն վերջին հաշւով, պատմութեան ազդակը՝ եւ-
րակայական-անհասաներու հոգին- կը դասնար :


Վերջերս նոր ուղղութիւն մ'ալ մջջտեղ եկաւ, որ
իսկապէս ոչ այլ ինչ է, բայց եթէ նախկիններու համա-
դրութիւնը, և իրօք անունն ալ այդ ցոյց կուտայ. այդ
սինքնէսիկ մոնիզմն է (համադրական միականութիւն):
Սինթետիկ (համադրական) անոր համար կ'ըսուի, որով-
հետեւ պատմութեան ազդակը ոչ թէ մէկ, երկուսը, այլ
բոլորը միասին կ'ընդունի, այսինքն թէ սնեստական
պայմանները — բնութիւն, աշխարհագրական դիրք, կը-
լիմայ — և թէ գաղափարաբանութիւնները — կրօն, իրա-
ւունք, գրականութիւն և այլն. — իսկ մոնիզմ՝ (միակա-
նութիւն) անոր համար կ'ըսուի որ, անտեսութիւնը և
գաղափարաբանութիւնը ոչ թէ առանձին առանձին ազ-
դակներ են, այլ մեկ ազդակի երկու երեսներ :

Մենք վերջացուցինք պատմութեան փիլիսոփայու-
թեան մասին յայտնւած բոլոր տեսութիւնները համա-
ռօտակի, թէպէտև կային ուրիշներ ալ, բայց կրկնու-
թենէ խուսափելու համար չգրեցինք :

Այս բոլորէն յետոյ կը մնայ հսկայ աշխարհայեացք
մը, որը նոր է իւր արտայայտութեամբ և բննադասող
չիններու վերաբերմամբ. դա պատմութեան մատերիա-

լիստական հասկացողութիւնն է, կամ պատմական մասերիալիզմը:

Պատմական մատերիալիզմը, իբրև նորագոյն տիրապետող աշխարհայեացք, և իբրև լայն ու լուրջ մեթոս մը, չէինք կրնար թեթեակի անցնիլ, ուստի այդ մասին ասպագային կ'անդրադառնանք՝ աւելի ընդարձակօրէն շօշափելով այն: Մինչև հիմա մեր բերած պատմափիլիսոփայական ուղղութիւններու ո՛ր մասի ուղիղ և որի սխալ լինելը կը տեսնենք դարձեալ պատմական մատերիալիզմի քննութեան մէջ:



ՎԵՐՉ

